ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՒԹԵՐԱՐՊ ՏԱՐԻ

№ 11

ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ" Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
Ֆոյոյիանցի և Բարեատիանցի փողոցների անկիւնում.
1890



ԽԱՉԱՐԵՍԱ ՁԵՎԱՐԱ

Եղանաստանեւիրիգամեայ տարեդարձի առիթով:

ՄԱՆՈՒԿԻՆ

(ՆՄԱՆՈՒԹԻՒՆ)

Տեսնում՞ ես, մանուկ, երկնքի վերան
Ինչպէս այն ամպը լողում՞ է հանդարտ—
Անծանօթ է նա ընտաւ ստրկութեան,
Զբօսնում՞ է օդում՞ ազատ ու անդարդ...

Բայց, աւա՜ղ, ամպը չէ այն երջանիկ,
Թէպէտ ազատ է նա օդի միջին...
Ամպը չէ կարող, իմ խելօք մանկիկ,
Քեզ պէս մընտաւծել ու սիրել մէկին...

***

Աբա՛, մէկ նայիր աստղերի խմբին...
Տե՛ս, որքա՜ն նոքա փայլում՞ են պայծառ,
Կասես, թէ ոսկու կրտորներ լինին
Երկնից կամարին կըպցրած շարէշար...

Բայց արեւելքից կ'ելնէ արեգակ,
Կընհանգչին մէկ մէկ աստղերն շտապով...
Եւ կըմնան այդպէս անդորը շարունակ,
Երբէք չըզգալով, չըմընտաւծելով...

Տեսնում՝ ես այնտեղ, կանաչ դաշտերում,
Գոյնզգոյն ծաղկունք խոտերի միջում՝—
Վաղ-առաւօտեան ցօղի տակ ծածկուած—
Տատանւում՝ են մեղմ՝ զեփիւռի ազդաջ...

Բայց շուտով կըգայ ծըմեռն ահալից
Եւ ծաղկունք անշուշտ կըմեռնին ցըրտից.
Անբախտ է՛ն նոքա, որ զուրկ են սիրուց,
Որ զուրկ են իսպառ մոռածելու շնորհից...

***

Եւ դու իմ՝ մանկիկ, նըման ես ամպին
Քո այդ թըրթըռան, ապիտակ ձեռքերով...
Դու գեղեցիկ ես, նըման աստղերին—
Քո պայծառ, անհոգ, ժըպտող աչերով...

Բայց դու աւելի բախտաւոր կ՚լինես,
Քան ամպը, աստղը եւ այն ծաղիկներ...
Դու կեանք կը մընես, դու կըհամբուրես,
Որ պէտք է „սիրել“, պէտք է „մոռածել“...

Հ. ԲԱԼՈՒՂԵԱՆՑ

ՁՆՁԴԱՔԿ

(Տուրգենև)

բսկց էի վերադառնում և անցնում էի այգու ծառուղիով։ Շունը վազում էր առաջս։

Յանկարծ նա մեղմացրեց քայլերը և սկսեց գաղտնապոզի յառաջանալ. կարծես իր առաջ ոչ էր զգում։

Նայեցի ծառուղու երկարությամբ և տեսայ մի մատաղ ճնճղուկ, կոցի շուրջը դեղնագոյն և գլուխը դեռ ապուամաղով էր ծածկ-

ւած։ Նա ընկել էր ընից (քամին շարժում էր ծառուղու թխտենիները) և անօգուտ տարածելով իր դեռահաս թևիկները, նատել էր անշարժ։

Շունս համբաքայլ մօտենում էր նրան, երբ յանկարծ մօտակայ ծառից պոկուելով քարի նման վայր ընկաւ հնաւուրց սեւակուրծ ճնճղուկը—ուղիղ նրա դնչի առաջ և միանգամայն փեատուրները գզգզած, այլայլած, յուսահատ և աղիողորմ ճիչով մի երկու անգամ յարձակուեց շան մեծատամ բաց բերանի դէմ։

Նա յարձակուեց ազատելու, նա իր մարմնով պատսպարեց իր ձագուկը... բայց նրա փոքրիկ մարմինը դողում էր սարսափից, ձայնը վայրենի ու խռպում էր, նա անզգայ էր դարձել, նա զոհում էր իրան։

Ո՜հ, շունը ինչ ահռելի հրէշ պիտի թուէր ճնճղուկին. բայց դարձեալ՝ նա չկարողացաւ հանդիսատ նատել իր բարձր, ապահով ճղան վրայ... Ոյժը—զօրեղ նրա կամքից—վայր նետեց նրան վերևից։

Իմ Տրեգօրը կանգ առաւ, նահանջեց... Երևի նա էլ ընդունեց այդ ոյժը։

Ես շտապեցի կանչել դրդռւած շանը և ակնածելով հեռացայ։

Այո՛, մի ծիծաղէք. ես ակնածում էի այն փոքրիկ հերոս թռչնի առաջ, նրա բռնկուած սիրոյ առաջ։

Սէրը, մոռացում էի ես, մահից էլ, մահուան երկիւղից էլ զօրեղ է։—Միայն նրանով, միայն սիրով է պահպանուում և շարժուում կեանքը։

Գ. ՔԱՀ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ

ՀԷՔԻԱԹՆԵՐԻ ԱՆՄԱՀ ՍՏԵՂԾՈՂԸ

(Պատկերներ Անդերսենի կեանքից)

6.

ՄՈՆԹ, ՈՒՍԱՆՈՂ ԵՒ ՄԱՏԵՆԱԴԻՐ

Անդերսէնն արդէն քան տարեկան էր, որ մնաւ Սլագէլզէի լատինական դպրոցը: (Սլագէլզէն մի փոքր քաղաք էր Զէլանդիայում): Այդ դպրոցը քաղաքի պարծանքն էր եւ քաղաքացոց խօսակցութեան գլխաւոր առարկան: Ամեն տան յայտնի էր լինում, թէ աշակերտներից ո՞րն է վարձատրւել յառաջադիմութեան համար, նրանց ամեն տեղ պիրով ընդունում՝ էին, նրանց մուտքն ազատ էր թատրոնում՝ վերջին գլխաւոր կրկնութեան ժամանակ:

Անդէրսէնն այստեղ մի բնակարան վարձեց: Բնակարանի տէրը մի պառաւ կին էր կրթուած դասակարգից. նա էր տալիս ճաշն էլ եւ շատ լաւ էր կերակրում: Սենեակի պատուհանները նայում՝ էին դէպի այգին ու անտառը, վայրենի հաղորդի թփի ճղները վեր բարձրանալով՝ փաթաթւել էին լուսամուտների շրջանակներին եւ ծածկել նրանց աղօտ եւ այրւած ապակիները:

Դպրոցումն Անդէրսէնին ընդունեցին նախավերջին դասատանը եւ նստեցրին ամենափոքր մանուկների հետ մի նստարանի վրայ, որովհետեւ նա ոչինչ չգիտէր ամենեւին:

Դպրոցի տեսուչը սովորութիւն ունէր ծաղրել աշակերտներին. շատ բնական է, որ ամենից շատ Անդէրսէնը կենթարկուէր նրա ծաղրին, եւ հէնց այս պատճառով էլ առաջին իսկ օրից շատ խեղճացաւ, իրան ճնշուած համարելով:

Օդենզէից դուրս գալու օրը Անդէրսէնը խօսք տուաւ իրան, որ էլ ոտանաւոր չգրէ, մինչեւ շաւարտէ իր ուսումը, բայց երբ հասաւ Սլագելզէ, չկարողացաւ իր խօսքին հաստատ մնալ: Նրգեցողութեան ուսուցիչը մէկից իմանալով՝ որ Անդէրսէնը ոտանաւորներ է հիւսում, պատուիրեց, որ մի շնորհաւորական երգ գրէ վերատեսչի նոր պաշտօնի մէջ մտնելու առիթով, որ պիտի տօնէր հանդիսաւոր կերպով: Անդէրսէնը յօրինեց երգը, նոյնը շարադրեցին եւ երգեցին տեղական եպիսկոպոսի ներկայութեանը: Վերատեսուչն այս առիթով ոչ մի նկատողութիւն չարաւ երգի հեղինակին, բայց այդ օրուանից սկսեց աւելի խստութեամբ նայել նրա վրայ:

Նոյն ծմեռը Անդէրսէնի պապն ու տատը մեռան, կտակելով նրան իրանց տնակը, որ հնութեան պատճառով քանդել տին: Պատանի ժառանգին հասաւ 20 ռէյխստալէր, որ մեր փողով անում է մօտ քառասուն մանէթ: Այս նրա համար մի մեծ հարստութիւն էր: Կեանքն Անդէրսէնի համար շատ թաղցրացել էր այժմ: Վրայ հասաւ ցանկալի ամառը: Աշակերտներին արձակուրդ տին: Անդէրսէնը մեծ ուրախութիւնով վերադարձաւ իր ծննդարանը՝ Օդենզէ: Երբ որ հնուից երեւաց իրանց եկեղեցու կամթողիկէն, Անդէրսէնն ու-

ըսխուլթիւնից գիրկը բաց արաւ, եւ քիչ մնաց ճանապի մէջտեղը ծունկ չոքէ:

„Մայրս“, գրում՝ է ինքն Անդէրսէնը իր ինքնապատում՝ կենսագրութեան մէջ, „էլ չէր իմանում՝ ինչ անէր, երբ որ տեսաւ իր սիրելի որդեկին: Առաջին իսկ օրը յիշեցրեց ինձ, որ ես պէտք է այցելութիւն անեմ՝ իր բոլոր ծանօթներին ու բարեկամներին եւ քաղաքի պատուաւոր անձինքներին: Երբ որ ես անցնում՝ էի փողոցովը, պատուհանները բաց էին անում՝ եւ իմ՝ ետեւից նայում՝: Շուտով տարածուեց ամեն տեղ, որ ես թագաւորի որդեգիրն եմ՝, նրա սեփական փողոմն եմ՝ ուսում՝ առնում՝: „Երեւում՝ է, որ Հանս Քրիստիանը, մաշկակար Մարիամի որդին, այնպէս յիմար չէ, ինչպէս կարծում՝ էին շատերը“, ասում՝ էր մայրս, ինձ փարփայելով: Իսկ մէկ անգամ՝ էլ, երբ հրաւիրուեցայ գնդապետ Հուլբէրգի եւ տեղական եպիսկոպոսի ընտանիքների հետ նաւակով զբօսնելու եւ անցայ մեր պարտէզի մօտովը, մայրս ուրախութիւնից լաց էլաւ, ասելով դրացիներին, որ ինձ պատում՝ են ինչպէս մի կոմսի որդու:“

Արձակուրդի լրանալուց յետոյ Անդէրսէնը վերադարձաւ Սլագէլզէ եւ բոլոր ուժովը շարունակեց իր ուսումը: Նրան շուտով տեղափոխեցին բարձր դասատուն, բայց հեշտութիւնով չընտանաւ նա այդ բարձրութեանը. պէտք է չափից դուրս աշխատէր, որ հասնէր իր հասակակիցներին:

Դպրոցի վերատեսուչը թէեւ գիտնական եւ տաղանդաւոր մարդ էր, եւ յայտնի էր իր պատուական թարգմանութիւններով դասական մատենագիրների, բայց իբրեւ մանկավարժ՝ անընդունակ էր: Ահա ինչ է՝ գրում՝ Անդէրսէնը նրա մասին. „նա ուսուցչութիւնը համարում՝ էր մի կատարեալ տանջանք իր հա-

մաը, բայց աշակերտներս կրկնապատիկ էինք տանջ-
ւում: Աշակերտների մեծ մասը նրանից սարսափում
էր, իսկ ես՝ ամենից աւելի, եւ այս ոչ թէ նրա խըս-
տութեան համար, այլ նրա այն սովորութեան համար,
որով ամենիս մէկ մէկ անարգական անուն էր կըպ-
ցնում: Եթէ օրինակ՝ դասի ժամանակ ուսումնարանի
մօտով անց էին կացնում կովերի նախիրը, եւ նա
տեսնում էր, որ մեզանից մէկը պատուհանով նայում
էր նախիրին, էլ այնուհետեւ պրծած էր մեր քանը,—
իսկոյն հրամայում էր, որ ամենքս՝ էլ վեր կենանք եւ
պատուհանների առջեւ շարուելով՝ նայենք, թէ ինչպէս
են դէպի դաշտ քշում „մեր եղբայրակիցներին“: Եթէ
հարցաքննութեան ժամանակ մեզանից մէկը նրա ուզա-
ծի չափ շուտ, եւ սուր չէր պատասխանում, նա իսկոյն
ինքնում էր կաթէդրայից եւ այլ եւս աշակերտին չէր
հարցնում, այլ երեսը դարձնում էր հնոցին եւ նրան
էր հարցնում: Չընայած նրա այս տարօրինակութեանը,
ես անընդհատ առաջ էի գնում եւ մի քանի առար-
կայում գերազանցում էլ էի մինչեւ անգամ: կրօնից,
սրբազան պատմութիւնից, ազգային լեզուից ստանում
էի բարձր թուանշան, իսկ վարքիս համար՝ „անապատ“:
Բայց դատատան վերատեսչի վարմունքն ինձ հետ ան-
տանելի էր: Սրա հակառակ ամեն կիրակի միւս լա-
ւագոյն աշակերտների հետ ինձ եւս հրաւիրում էր
ճաշի: Նա այստեղ իր տանը ըստորովին ուրիշ մարդ
էր դառնում, եւ այն չէր այլ եւս, ինչ որ էր դպրո-
ցումը: Տանը կատակներ էր անում, ծիծաղում, ծիծա-
ղեցնում, զանազան խաղեր ու զարմանալիներ էր
հնարում, եւ երեխայի նման օգնում էր փոքր աշա-
կերտներին խաղալիկները գործադրելիս:

Բայց այս խստապահանջ վերատեսուչը երկար
չըմնաց Սլազելգեումը. խնդիր տուաւ, որ նրան տեղա-

փոխեն Հէլգինգեօր, ուր եւ նրան նշանակեցին շտաբով: Այս նորութիւնը Անդէրսէնին հաղորդելով՝ վերատեսուչն առաջարկեց նրան, որ իր հետ գնայ Հէլգինգեօր: „Ես քեզ առանձին դասեր էլ կըտամ, ասաց, եւ դու տարի ու կէսից յետոյ կըմտնես համալսարան, իսկ այս անհնարին կըլինի, եթէ մնալու լինիս այստեղ: Հէնց հիմիկուանից տեղափոխուիր եմ՝ տունս, ես էլ քեզանից այնքան կառնեմ՝ ճաշի եւ ընակարանի համար՝, որքան որ տալիս ես քո տանտէր պառաւին:

Անդէրսէնը գրեց Կոլլինին ու խնդրեց նրա թոյլտուութիւնը: Կոլլինն ուղարկեց իր համաձայնութիւնը, եւ Անդէրսէնը տեղափոխուեց խստաբարոյ վերատեսչի մօտ:

Սլագելզէից հեռանալը նրան ծանր էր գալիս. այնտեղ թողնելու էր իր սիրելի ընկերներին, լաւ ծանօթներին. նա այդ քաղաքի յիշատակն անմոռանալի պահելու համար խնդրեց բոլոր բարեկամներին, որ ամենքն էլ գրին իր ալբոմում:

Ծովային ճանապարհորդութիւնը դէպի Հէլգինգեօրը, Զունդի նկարչական պատկերը նաւահանգստում՝ եղած բազմաթիւ նաւերով, եւ ուրիշ շատ զեղեցիկ տեսարաններ վերին աստիճանի ոգեւորեցին պատանի Անդէրսէնին: Նա իր ստացած տպաւորութիւնը շատ զեղեցիկ կերպով նկարագրեց եւ ուղարկեց Կոպէնհագէն իր բարեկամ՝ պրոֆէսսօր Նիբրուպին, եւ տեսնելով՝ որ նկարագրութիւնը շատ յաջող է, միւնոյնը բառ առ բառ մի քանի ուրիշ բարեկամների էլ ուղարկեց: Այս արարմունքը Անդէրսէնին շատ ծիծաղելի հանգամանքի մէջ գցեց: Նրա հար բախտից Նիբրուպը մի լրագրում՝ տպել տուաւ Անդէրսէնի նամակը: Այս նամակը որ կարդացին Անդէրսէնի միւս բարեկամները, որոնք պատգել էին միւնոյնը, մնացին զարմացած:

Նրանցից ամեն մէկը կարծում էր, թէ միայն ինքն է ստացել, եւ կարծեցին, թէ տպագրութեան տողն էլ ինքն Անդէրսէնն է եղել . . .

Նոր ստացած տեղը, նոր հանգամանքները, գործունէութեան նոր ասպարէզը սկզբումը լաւ տրամադրութիւն տուին տարաբնոյթ վերատեսչին, բայց մի ամիս անցած չանցած, հին այծերը էլի մօտ եկան եւ խեղճ Անդէրսէնը դառաւ նրա ծաղրի եւ յանդիմանութեան առարկան: Ինքնակամ վերատեսուչը ամեն օր նախատում էր Անդէրսէնին, նրան անուանում էր անընդունակ, ապուշ, անուղեղ կենդանի, եւ խեղճին մինչեւ այն տեղը հասցրեց, որ նա իր անտանելի վիճակի մասին գրեց իր բարերար Կոլլինին: Գրեց թէ՝ „Վերատեսչի կարծիքով՝ յոյս չկայ, որ ես մի բան դառնամ, ապագայում՝ լաւ բան ինձանից ապասել կարելի է“: Այս նամակը շատ վրդովեց Կոլլինին, եւ նա բացատրութիւն պահանջեց վերատեսչից:

Ահա եւ Անդէրսէնի թշնամի կարծուած վերատեսչի պատասխանը բառ առ բառ.

„Հանս Քրիստիան Անդէրսէնը մտաւ լատինական դպրոցը Սլագելզում 1822 թուին. զուրկ լինելով տարրական գիտելիքներից, նա, չընայած իր քսանամեայ հասակին, ընդունուեցաւ նախավերջին դասատանը: Բնականից օժտուած լինելով կենդանի երեւակայութիւնով եւ ջերմ զգացմունքով, Անդէրսէնը շուտով ընտելացաւ աւանդած ուսմունքներին, աչքի ընկնելով իր յառաջադիմութիւնով այն առարկաներում, որ աւելի սիրելի էին իրան, բայց ընդհանրապէս յառաջադիմում էր այնքան յաջող, որ շուտով նրան պատրաստական դասատանից տեղափոխեցին առաջին բարձր դասատունը, ուր այժմս է, այն զանազանութիւնով միայն, որ Անդէրսէնը ստորագրեալիս հետ տպրում ենք այժմ ոչ Սլագելզում, այլ Հելզինգեորում: Ուրիշների նիւթական օժանդակութիւնով, որին արժանի է, նա անսայթաք կերպով յառաջադիմում է իր ուս-

ման մէջ, բերանացի եւ գրաւոր պատասխանները միշտ դասաւորուած են լինում շատ գեղեցիկ, իսկ իրան գրաւող առարկաների մէջ գերազանցում է ամենին։ Անդէրսէնը միշտ ջանասէր է, իսկ վարքով շատ հեզ, խոնարհ եւ բարեսիրտ, կարող է օրինակ լինել ամեն մի ուսումնարանի աշակերտաց համար։ Պէտք է այս էլ ասել նաև, որ եթէ նա այսպէս շարունակելու լինի իր ուսումը ինչպէս հիմա, մէկ տարուց յետոյ կարող է մտնել համալսարան։ Ունենալով երեք նշանաւոր յատկութիւն, որ ցանկալի էր տեսնել ամեն մի աշակերտի մէջ եւ որ հազիւ է պատահում, որ երեքն էլ միևնոյն անձի մէջ լինին, այն է՝ լաւ ընդունակութիւն, ջանասիրութիւն եւ պատանեկան վարք, որոնք անկասկած գտնւում են Հ. Ք. Անդէրսէնի մէջ, նա, իմ կարծիքով, կատարելապէս արժանի է ամենայն խնամքի եւ օժանդակութեան, որով նա հնար կունենայ յառաջադիմել սկսած ասպարիզում, որից հեռանալը նրա համակում աններելի է։ Ոչ միայն նրա պատաւական ուղղութիւնը, այլ եւ նրա անընկճելի տոկունութիւնը, անդիմադրելի եռանդը, անկասկածելի տաղանդը ամենից լաւ երաշխիքն են, որ նրա վրայ դրած դրած ամեն տեսակ օժանդակութիւն ոչ մի դէպքում ի զուր չի անցնիլ։

18 յուլիսի 1826 թ. *Ս. ՄԻՑՍԼԻՆԳ*

Դոկտոր փիլիսոփայութեան եւ բէկտորատին դպրոցի Հելդենդեորում։

Անդէրսէնը տեղեկութիւն չունէր, թէ իր մասին ինչ կարծիք է յայտնել վերատեսուչը, եւ հետզհետէ ընկճւում էր հոգեպէս եւ կորցնում ինքնավստահութիւնը։ Նրան փոքր ինչ մխիթարեց Կոլլինի սիրալիր նամակը, որի մէջ քարեսիրտ ծերունին խորհուրդ էր տալիս չըվհատուիլ, հանդարտ ու խոհեմ լինել եւ համբերութեամբ ապասել, որ ժամանակն ամեն ինչ կարգի բերէ։ Նա գրում է նաեւ՝ „Բէկտորը գնահատում է քեզ, սիրելիս, նրա վարմունքն է միայն տարօրինակ, այդպէս է նրա բնութիւնը, ի՞նչ պէտք է անես։ Արիացիր եւ թող նրա վարմունքը քեզ չըվհատեցնէ“...

Հէլզինգեօրի մեղմ՝ կլիմայն եւ պատուական ընութիւնը շատ լաւ ներգործութիւն ունեցան Անդէրսէնի թոյլ առողջութեան վրայ. նա չէր կարող հեռու՝ տեղ գրօսնելու գնալ: Հէնց որ աւարտում՝ էին դասերը, դպրոցի դրսի դռները փակում՝ էին կողբէքով: Այսպէս էր կարգադրած: Եւ որովհետեւ Անդէրսէնը դրպրոցի բակումն էր կենում՝ բէկտորի տանը, խեղճը հարկադրուած էր նստել դասատան խեղդող օդի մէջ, եւ սովորել դասերը: Երբեմն գնում՝ էր խաղալու բէկտորի երեխանց հետ, բայց աւելի յաճախ փակւում՝ էր իր փոքր խցիկում: Ոչ ոք նրան այցելութեան չէր գնում՝, ընկերները նրա մօտ չէին գնում՝, վախենում՝ էին հանդիպելու դպրոցի վարչութեանը: Անդէրսէնը լուռ ու մունջ անց էր կացնում՝ իր տխրալի կեանքը, այլ եւս ոչ որի չէր զանգատւում՝: Կարելի է ուրեմն գուշակել, թէ ինչ անհամբերութիւնով կը լինէր նա սեւեռիս ամարային արձակուրդին: Նա այդ ժամանակ հիւր գնաց ծովապետ Վուլֆի մօտ, որի հետ ծանօթ էր դպրոց մտնելուց առաջ:

Վուլֆը սրտանց համակրում՝ էր Անդէրսէնին, եւ ինքն էր առաջուց հրաւիրել, որ գայ իր մօտ Կոպէնհագէն մի քանի օրով: Ծովապետի կինը հարազատ մօր պէս էր ընդունում՝ Անդէրսէնին, իսկ երեխէքը շատ սիրում՝ էին նրան ու շատ ուրախանում՝, երբ գնում՝ էր նրանց մօտ: Կոլլինի ընտանիքից յետոյ այս երկրորդ ընտանիքն էր, որ ընդունում՝ էր Անդէրսէնին ինչպէս իր հարազատ անդամներից մէկին եւ փայփայում՝ նրան: Վուլֆը ծովային կօրպուսի դիրեկտօրն էր եւ ընակում՝ էր թագաւորական շքեղազարդ պալատումը: Անդէրսէնին մի մեծ սենեակ էին տուել, որի պատուհանները նայում՝ էին հրապարակին: Շատ անգամ՝ պատուհաններից նայելով դէպի փողոցը, միտն էին գալիս „Հազար

ու մէկ գիշերի“ Ալանենի խօսքերը, թէ՝ «ահա այնտեղ ներքեւումը ես երբեմն թափառում՝ էի ինչպէս մի աղքատ տղայ“, եւ նրա սիրտն այդ ժամանակ լցնում՝ էր շնորհակալութիւնով դէպի Աստուած, որ նրան փողոցից բարձրացրել էր մինչեւ այդ շքեղ պալատը:

Դեռ Սլազէլզում՝ եղած ժամանակ Անդէրսէնը հրդիմացաւ եւ սկսեց դասերից ազատ ժամանակը թաքուն երկու ոտանաւոր գրել—„Հոգի“ եւ „Առ մայր իմ“, որոնք վերջումը տպագրուեցան իր առաջին քանաստեղծութիւնների ժողովածուի մէջ: Այդ երկու ոտանաւորը նա իր անդրանիկ քանաստեղծութիւններն էր համարում: իսկ Հէլզինգեօրումը նա գրեց «Տարեմուտի գիշերը» եւ «Մեռնող երեխան»: Վերջինս շատ շուտով տարածուեցաւ Դանիայումը:

„Մեռնող երեխայի“ ձեռագիրը ես ինձ հետ բերի Կոպենհագէն„, գրում՝ է Անդէրսէնը, „եւ կարդացի իմ՝ մի քանի ծանօթների մօտ: Մի քանիքը լռեցին միայն հատ ականջով, ինչպէս սովորաբար լսում՝ են ոտանաւորները, իսկ շատերն էլ ստիպեցին ինձ կրկնել կարդալս մի քանի անգամ՝, որ աւելի շատ ծիծաղեն իմ՝ գաւառական արտասանութեանս վրայ, մի քանիքն էլ թէեւ գովեցին, բայց ինձ զգալ տուին, որ փոքը ինչ պարկեշտ լինիմ՝ եւ շատ չրպանծամ՝ իմ՝ տաղանդով: Իմ՝ ամենաբարի պաշտպանուհիներից մէկը մէկ անգամ՝ ինձ ասաց եւ նոյնը կրկնեց նա եւ նամակով, թէ՝ „Ի՛ սէր Աստուծոյ, մի՛ երեւակայէք, որ դուք քանաստեղծ էք միայն նրա համար որ մի քանի ոտանաւորի պէս բան էք գրել: Դուք ի՞նչ կրկարծէիք, օրինակ, եթէ ես մտքովս անց կացնէի, որ պիտի Բրազիլիայի թագուհին դառնամ: Դուք անշուշտ, անմտութիւն կրհամարէիք: Այսպէս էլ ահա ես եմ՝ նա-

յում՝ ձեր համոզված լինելու վրայ, որ դուք բանաստեղծ էք» . . .

«Ոչ», աւելացնում՝ է Անդերսէնը. «ես չէի հաւատում՝ եւ համոզված չէի, որ ես բանաստեղծ եմ՝ բայց ես կարծում՝ եմ՝ եթէ հաւատայի, թէկուզ փոքր չափով, որ իմ՝ մէջ տաղանդ կայ, այդ մի մեծ յոյս եւ մեծ միխիթարութիւն կըլինէր ինձ համար»:

Կոպէնհագէն եղած ժամանակ բարձր կարգի տներում՝ բաւական կոշտ նկատողութիւն էին անում՝ Անդերսէնին, նրա ռամկական ձեւերի առիթով, եւ իր կարծիքները չըթաքցնելուն համար: Բայց այսու ամենայնիւ այդ օրերը համարում՝ էին ամենաբախտաւորը նրա ջահէլութեան ժամանակ: Վուլֆի տանը նա ըստէպ պատահում՝ էր մի մարդու, որի վրայ հոգեզմայլութեամբ էր նայում՝ եւ որի առջեւ խոնարհւում՝ էր: Դա էր Դանիայի հռչակաւոր բանաստեղծ Աղամ Էլէնշլէգէրը: «Նա այն ժամանակ ամենի լեզի վրայ էր, ամենի խօսակցութեան առարկան», գրում՝ է Անդերսէնը,—«նա ինձ թւում՝ էր մի գերբնական էակ: Կարող էր ներկայացնել ձեզ իմ՝ բախտաւորութիւնը, երբ նա մէկ երեկոյ Վուլֆի տանը մօտեցաւ ինձ եւ ձեռք տուաւ այն ժամանակ, երբ ես իմ՝ հագուստիս հնութիւնից ամաչելով՝ քաշւել էի պատուհանի մօտ եւ նրա վարագուրի տակ կիսով չափ ծածկւել եւ աշխատում՝ էի, որ նկատելի չըլինիմ՝ սաստիկ լուսաւորած դահլիճում: Նրա վարմունքն այնքան սաստիկ ներգործեց վրաս, որ քիչ մնաց ծունկ չոքէի առջեւը: Նրա կրտսեր աղջիկը՝ Շառլոտան՝ վերաբերում՝ էր ղէպի ինձ մեծ համակրութիւնով, նրա հիւրընդունելութիւնը, ուրախ ու զւարթ ընաւորութիւնը իմ՝ աչքումն աւելի զմայլելի էին կացուցանում՝ Վուլֆի բարեկամական ինչոյքներն ու երեկոյթները: Պէտք է երեւակայել,

թէ արձակուրդի այս ուրախ կեանքը վայելելուց յետոյ նրպիսի թշուառ կեանք եւ տանջանք էր սպասում՝ ինձ իմ՝ բէկոտրի տանը: Մէկ անգամ՝ բէկոտրը մըտաւ իմ՝ խուցը. նա հէնց նոր էր վերադարձել Դօպէնհագէնից, ուր երեւի լսել էր, որ ես կարդացել եմ՝ իմ «Մեռնող երեխան»: Այդ մարդու դէմքիցն արդէն զուշակում՝ էի, թէ ինձ ինչ պիտի անէ. մի ցասկոտ եւ շեշտակի հայեացք ձգելով վրաս, նա պահանջեց, որ ես իսկոյն իրան տամ՝ նոյն ոտանաւորը, եւ մի եւ նոյն ժամանակ ասաց, որ եթէ բանաստեղծութեան մի նշոյլ անգամ՝ նկատէ իմ՝ ոտանաւորի մէջ, ինձ սիրով կընկերէ: Դողդողալով ինչպէս տենդից բռնուած, իրան տուի թշուառ թերթիկս: Նա կարդաց ոտանաւորս, քահ քահ խնդաց, յիմարի ցնորք անուանեց, եւ սկսեց ինձ հայհոյել: Երեւում՝ էր, նա ուղղակի ուզում՝ էր ինձ տանջել իր հոգեկան վատ տրամադրութեան համար եւ իր անձնական քիմքին բաւականութիւն տալու համար» . . .

Եթէ ճակատագիրը հազատէր Անդէրսէնին կամապաշտ բէկոտրի ձեռից, Անդէրսէնը կընհիւանդանար նեարդային ջերմով: Երբա բախտից պատոր Վատլինը, որ դպրոցումը երբայերէնի ուսուցիչ էր, քանիցս անգամ՝ ակամատես լինելով բէկոտրի կոպիտ վարմունքին, նա յատկապէս դրա համար գնաց Դօպէնհագէն Դօլլինի մօտ եւ խնդրեց նրան որ Անդէրսէնին ազատէ բէկոտրի անզութ ճանկերից: Այստեղ, հարկաւոր ենք համարում՝ մի միջանկեալ եւ ընագրից դուրս մի ծանօթութիւն տալ: Այն ուսուցիչները, որոնք հին, դասական ասուած լեզուների դասատու են, սաստիկ ատում՝ են բոլոր այն շարադրութիւններն ու ոտանաւորները, որոնք իրանց վսեմութիւնովը եւ մանաւանդ իրանց ձեւովը նման չեն դասականին, ինչպէս որ

նորերն էլ հինն են ասում, որովհետև նրանցում միայն փքուն ճոռոմաբանութիւն են տեսնում, իսկ ճարտարութիւնն ու արուեստը մնում են անընդունելի: Այս է պատճառը ահա, որ ըէկտորին դուր չէին գալիս Անդէրսէնի գրածները: Ուրեմն իսկապէս նա շատ մարդ էր, այլ հնասէր էր եւ նորատեաց: Այսպէս են եւ մեր էլ հին հայկաբանները. ինչպան էլ լաւ գրես, եթէ աշխարհիկ է եւ պահպանած չես հին բանաստեղծելու ձեւը, ճարտասանութեան կանոնները, նրանք կը մերժեն: Նրանց համար կեանք, պարզութիւն, անմեղութիւն, ընտիրութիւն չկայ, այլ միայն արուեստ եւ այն էլ շատ անզամ ճոռոմաբանութեան եւ արուեստականութեան հասցրած . . .

Կոլլինը գրեց Անդէրսէնին եւ կանչեց Կոպէնհագէն եւ կարգադրեց, որ նա դուրս գայ դպրոցից եւ պատրաստուի մանաւորը դասեր առնելով համալսարան մտնելու համար: Ըէկտորն այս լուրը որ առաւ, սաստիկ բարկացաւ: Ճանապարհ ձգելիս նա ասաց Անդէրսէնին. „Դու երբէք համալսարան չես ընկնիլ, եւ եթէ կը գտնուի այնպիսի մի ախմախ մարդ, որ կը տպագրէ քո ոտանաւորները, ապա ես առաջուց ասում եմ՝ ահա, որ նրանք կը փիթեն գրախանութներում՝ եւ ոչ մի առնող չեն ունենալ, իսկ դու, Անդէրսէն, երբ եւ ինչ կընկնես զժատուն, եւ կարծեմ՝ ուշ չի լինիլ այդ›...

Անդէրսէնը մինչեւ սրտի խորքը վշտացած այդ, խօսքերից, լուռ ու մունջ հեռացաւ նրանից:

Դ. ԱՂԱՅԵԱՆՑ

(Վերջը միւս անգամ):



Յովհաննէս Խրաշատուրեան Լազարեանց

Որի յիշատակին Լազարեան ճեմարանում՝ նորահաս մանուկների համար առանձին դասատուն է հիմնւած:



ՏՐՏՈՒՆՋ

Թող երգդ լինի հոգեշունչ, ազդու,
Թողլինի թարգմանը քո տանջած հոգու,
Թող ելևէջները քո վշտոտ ձայնի
Պարզ արտայայտեն ցաւը քո սրտի:
Թող խօսքերդ լինին հանճարի պատ-
զամ,
Քեզնով թող խօսի ինքն Աստուած անզամ:
Թող նոյն իսկ ցաւից պատտուի քո սիրտ—
Մենք կըմնանք միշտ անվրդով, հանգիստ:

* *
*

Դէմքդ մոայլեցաւ... Քեզ դուր չէ՞ գալիս,
Որ անկեղծ կսկիծիդ մենք չենք ցաւակից.
Բայց ասա, մի՞թէ մենք քիչ ենք տանջւում,
Քիչ են մեր վիշտը, մեր ցաւ պնդատնում՞...
Դակ ենը դու իջար մինչև մեր խրճիթ,
Ե՞րբ դու հասկացար մեր ցաւերն ու վիշտ.
Ե՞րբ մեզ հետ լացիր, մեզ հետ տանջուեցիր,
Մեր արիւնաքուլի երգը երգեցիր:

Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ



ՍՊԱՆԻԱԾ ՀԱՑՐԸ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ)

Է.

Խանի դռանը զորզեր էին փռած և հետզհետէ հաւաքւում էին բէկերը, պատուաւոր թուրքերը։ Այդ ժամանակ խանը կատաղածի պէս սենեակում ուզում էր ուտել Մօլլա-Մուխտարին։

—Ես այստեղ չեմ կարող մնալ, խան, ասաց մօլլան. —ես չեմ կարող մարդամէջ դուրս գալ։

—Ախր ինչպէս դառաւ, որ դու, Մօլլա-Մուխտար, ասացիր թէ Յիսուս Աստուած է։ Չէիր ամաչում։

—Խան, հաւատացէք, ես էի որ Յիսուսին Աստուած ասացի, թէ դու լինէիր այնտեղ, դու Արզումանին Աստուած կասէիր։

Խանը ոչինչ չըպատասխանեց. բարկութիւնը բոլորովին փոխել էր նրա դէմքը, նա մտածում էր, բայց չէր կարողանում մի պատասխան գտնել։

—Ես կորցրի իմ սպատիւը, ես իմ այս միրուքը անպատուեցի, շարունակեց մօլլան,—հիմա ես գնում եմ, պիտի ուղղակի Քալբալայի դուռը գնամ և այնտեղ մինչև մահ պիտի ինձ ծեծեմ, չարչարեմ, թողութիւն աղաչեմ։

Եւ մօլլան դուրս գնաց։ Նրան հետևեց խանը, ասելով.

—Մեծ խայտառակչութիւն է, նա ինձ յաղթեց։

Ժողովը (մէջլիս) սպասում էր խանին։ Այդտեղ նըստած էր և Մէլիք-Շահնազարը, որ հէնց այդ օրն էր Շուշի եկել։

Խանը նստեց և այդ ժամանակ երկու ծառայ առաջ բերին մի ծեր մարդ, որի կռներն ու ոտները պինդ կապած էին հաստ չուանով։ Այդ ծերունին Սարգիս-ապերն էր, Արզումանի հայրը, մի մարդ, որի երեսը ծիծաղկոտ էր, քիչ կարմրած։ Ձիւնի պէս սպիտակ մազերը թէև վկայում էին որ այդ մարդը արդէն հասել է գերեզմանի դուռը, բայց բոլորովին չէին սազ գալիս նրա առոյգ ու պինդ քայլածքի, նրա սուր աչքերի հետ։ Նրա հասակը բարձր էր, մէջքը քիչ կռացած։

Խանը հրամայեց որ դրան պահեն, առաջ միւսին բերեն.

—Դու ինչպէս համարձակուեցար իմ ջորեպանին սպանել, երբ նա քեզանից հարկ էր պահանջում, հարցրեց խանը։

Հայը ձեռքերը կրծքին դրաւ, մի քայլ առաջ գնաց և ասաց.

—Մենակ հարկ չէր պահանջում, խան, գլխիդ ու արևիդ դուրբան. նա ինձանից էր կպել, պահանջում էր որ ես այն գիշեր տեղ տամ իմ տանը։

—Շատ լաւ էր անում, իմ մարդն էր, հոգիդ պիտի առնէր։

—Ի հարկ է, պատասխանեց հայը,—ես ինչ շուն եմ որ համարձակուեմ խանի մարդուն չէ ասեմ, ես հա-

մաձայն էի, սրահում լաւ անկողին պատրաստեցի, խընդրեցի որ այնտեղ քնէ։ Բայց նա ասաց չէ. դու սրահում քնիր, իսկ ես տանը։ Աղաչանք, պաղատանք արի, բան չդառաւ։ Էլի աղաչանք արի, բայց նա ինձ խփեց, ես էլ. . . . էհ, սխալուած էի թէ ինչ էր. . . նրան խփեցի նա մեռաւ . . .

—Սուտ ես ասում, խոզի տղայ, բարկացած կանչեց խանը։—Աքպարը այդպիսի մարդ չէր։ Այսքան ըէկերը նրան լաւ են ճանաչում։

—Հա՛, ճշմարիտ, Աքպարը շատ լաւ մարդ էր, խօսեցին ըէկերը այս ու այն կողմից։

—Տղե՛րք, կրակ . . . կանչեց խանը։

Ծառաները իսկոյն կրակի վազեցին։ Մեղադրուած հայը „կրակ» բառը լսելուն պէս ընկաւ ծնկների վրայ, սկսեց թոզի մէջ թաւալել և աղաչել, պաղատել։ Խանը դարձաւ դէպի Մէլիք-Շահնազարը և ասաց.

—Սրանց ես հաւի ճտեր պիտի շինեմ։ Դու շատ վատ ես արել մէլիք. դու սրանց երես ես տուել և հիմա այդպէս են անում. բոլորը սուտ է, նա չի ուզեցել հարկ տալ և սպանել է իմ մարդուն։

—Խա՛ն, գլխիդ մատաղ, ինձ ողորմութիւն արա, էլ չեմ անիլ, պաղատում էր հայը լաց լինելով։—Մէլիք, Աստուծու սէրին։

Մէլիքը խնդրեց խանին, բայց նա երեսը միւս կողմը դարձրեց, որպէս թէ չլսեց։

Կրակը պատրաստ էր. հրապարակի հեռու ծայրում այրւում էր խարոյկը, որը ծառաները անդադար բզբզում էին աւելի չաղացնելու համար։ Հայը անդադար թաւալ էր տալիս, հողը լիզում էր, քանդում։ Ըէկերն ու խանը անշարժ քարերի պէս նստած էին։

Երբ կրակի բոցը շատ բարձրացաւ, խանը ձեռքով նշան արաւ, իսկոյն բռնեցին դատապարտուածին, աչքերը

մի շորով կապեցին, վերցրին տարան ու գցեցին կրակի վրայ։ Խեղճը անընդհատ „վայ„ էր գոռում։ Բայց այդ աղաղակը շուտով կտրուեց։ Բարձրացաւ այրուող մսի խանձահոտը. բոլոր նստածները քիթները բռնեցին, բոցերը ամեն կողմից շրջապատեցին խեղճին։ Քիչ ժամանակից յետոյ լսելի եղաւ մի ՝մեծ պայթիւն, կարծես, կրակի մէջ հրացան արձակեցին, այրուող խանձողները դէս ու դէն թռան։

Այդ ժամանակ խանը կանչել տուաւ Սարգսին։

—Քո տղան մեզ շատ վնասներ է տալիս, ասաց նա.—այդ դու էլ գիտես։ Մաղի-կամուրջից դէնը մարդ չի թողում անցնէ։ Նա ինձ հետ թշնամութիւն է անում, բայց կոտորում է անմեղ մարդկանց։ Այդպէս է թէ ոչ։

—Չգիտեմ, պատասխանեց Սարգիս-ասերը։

—Ի՞նչպէս չգիտես։ Մի քանի ժամանակ սրանից առաջ սպանել է մեր Քէրիմ-բէկին. նա իմ աչքի լոյսն էր, ես նրան փեսացու էի ընտրել ինձ համար։ Հիմա նրա բարեկամները զժուած են այդ սպանութեան վրայ. պահանջում են անբախտի արեան հատուցումը։ Հասկանում ես։

—Մինչև այժմ ասածդ հասկացել եմ, բայց խընդրում եմ քիչ բարձր խօսիր, ականջս դժուար է լսում։

Այնուհետև խանի ձայնը սկսեց որոտալ.

—Նա սպանել է Ցեխ-Զորում իմ մարդկանցից տասն հատ։ Ես էլ որ մէկն ասեմ։ Նա չի հպատակւում։ Մեժլումի հետ միացած՝ ուզում է ռուսներին բերէ իմ երկրի վրայ . . . Ես քեզ բռնել տուի, որպէսզի նա, քո որդին, վախենայ, էլ այդպիսի բաներ չանէ։ Բայց նա, երևի, կարծում է թէ ես քեզ վնաս չեմ տալ և շարունակում է իր չարութիւնները։ Երդւում եմ Աստուծով որ ես գիտեմ պատժելը։ Դու տեսար ինչպէս պատժեցի այդ հային, լսեցիր թէ ինչպէս հրացանի պէս թնդաց կրակի

մէջ, այդ նրա զլուխն էր։ Նայէր, տես այն կողմում քանի մարդ կայ հաւաքւած, թէ այս բոպէին քեզ բաց թողնեմ, նրանք քո միսը ատամներով մաս-մաս կրկոտրեն։

—Այդպէս է, այդպէս է, բոռաց ամբոխը, որ հաւաքւած էր խանի առն ցանկապատի եռւում։ Սարգիսապերը յետ դարձաւ, արեւից աչքերը պաշտպանելու համար ձեռքը դրաւ ճակատին և երկար տնդղեց թուրքերին, որոնք նրան հայհոյում էին, ձեռքերով նշաններ էին անում և ցոյց տալիս թէ ճշմարիտ է, նրա միսը կտոր կտոր պիտի անեն։

Ապա ծերունին յետ դարձաւ և էլի սկսեց խանին նայել։

—Բայց ես չեմ թողնիլ որ քեզ վնաս տան, շարունակեց սա,—ես քեզ լաւ կըպահեմ, ծեր մարդ ես, թոյլ կըտամ որ ամեն օր ժամ գնաս, տէրտէրի ձայն լսես։ Այդ բոլորը կանեմ, եթէ դու խրատես քո որդուն, Արզումանին։ Ես կըմոռանամ ամեն ինչ, կընեռեմ նրան. թոյլ կը տամ որ գնայ ուր որ ուզում է։ Նա քո միւնուճար որդին է, դու պիտի խղճաս նրան, պիտի խրատես որ յետ կենայ իր բռնած ճանապարհից։ Թէ չէ՝ նա վաղ թէ ուշ պիտի իմ ձեռքն ընկնէ և այն ժամանակ դու չես կարող նրան իմ ճանկից պրծացնել։ Ես նրան պատառ պատառ կանեմ, շներին կըտամ։

—Իշալլահ, իշալլահ, գոռաց ամբոխը ցանկի եռւից։

Սարգիս-ապերը չէր պատասխանում։

—Քոփակ, ինչ ես պապանձւել, խօսեց Մէլիք-Շահնազարը,—չե՞ս լսում թէ ինչ են ասում։

Սարգիս-ապօր աչքերում արտասուք երևաց, այդ ամենքը նկատեցին։ Նա իր բռունցքով սրբեց արտասուքը, բարձրացրեց իր միմեանց հետ կապած ձեռքերը և ասաց.

—Ես Արզուման անունով որդի չունիմ։

Բէկերը ծիծաղելով միմեանց երեսի նայեցին։ Իսկ խանն ասաց.

—Իհարկէ, խեղճ ծերունի, քո տեղ ամեն մի մարդ այդպէս կանէր։ Իհարկէ դու կուզէիր որ այդպիսի որդին ծնուած էլ չլինէր։ Բայց ինչ անենք, ծերուկ, քո բաժինն էլ այդպէս է ընկել, ծերութեանդ օրում կապել է տուել քո ձեռքերն ու ոտքերը, բանդ է գցել տուել։ Վնաս չունի, էլի հայր ես, խրատիր նրան, իսկ եթէ խրատը չօգնէ, աղաչիր որ քո խօսքը լսէ։

—Ես Արզուման անունով որդի չունիմ, կրկնեց Սարգիս-ապերը։—Եթէ նա իմ որդին լինէր, դուք այստեղ ինձ չէիք դատիլ։ Եթէ նա իմ որդին լինէր, դու, Իբրահիմ, քեզ խան չէիր ասիլ։ Նա քեզ քո տան աւերակների տակ կըթաղէր, անունդ ու հետքդ կրկորցնէր։ Ես ձեզ նոր չեմ ճանաչում։ Արզումանը իմ որդին չէ, նա արժանի չէ իմ որդի կոչուելու, քանի որ ձեզ պէսներին թողնում է մեր երկրում։ Անպիտան, անարժան որդի... ինձ դուք չէք սպանում, իմ որդին է ինձ սպանում՝ թողելով ձեր ձեռքում։ Ես Արզուման անունով որդի չունիմ, բոլորդ լսեցէք ու հասկացէք։

Խանը տեղից վեր թռաւ, բէկերը իրարանցով ընկան։

—Դահիճ, գոռաց խանը։

—Նահլաթ, նահլաթ, ասում էին բէկերը թքելով։

Խանը մօտեցաւ ուղիղ կանգնած ծերունուն և մի սաստիկ ապտակ խփելով նրա երեսին, թքեց և ասաց.

—Թուհ երեսիդ . . .

Հարուածը սաստիկ էր, ծերունու քթից սկսեց արիւն թափուել, կարմիր գոյնով ներկել նրա սպիտակ միրուքն ու բեղերը։ Նա կռացաւ որ արիւնը լաւ թափուի։

—Դահիճ, հրամայեց խանը,—այս անօրէնի միսը կտոր կտոր կըսղոկես մարմնից, դէն կածես, որ այս գիշեր շները լաւ քէֆ անեն։ Իսկ գլուխը կախ կանես բերդի

պատէց, որ եկող—գնացողը անամօթ երեսին թքէ։

Ծերուէնին ինքը շուռ եկաւ և գնաց դէպի մեծ սիւնը. դահիճը հետևում էր նրան։ Խօսք չէր դուրս գալիս նրա բերանից, միայն մի անգամ շարժեց իր աջ թևը և դահիճը հասկացաւ որ նա ասում է թէ այդ թևը պինդ չէ կապած։ Նա պնդացրեց այդ կողմն էլ և իր գործը սկսեց։

Առաջին կտրած մսի կտորը ուղարկեցին Բէրիմ-բէկի մօրը, որպէսզի նա տեսնէ և սիրտը հովացնէ։

Լ. Ը. Օ



ԾԻԾՆՈՆԱԿԻՆ

Նա, հեռացիր, սիրուն ծիծեռնակ,
Էլ զուր է խաղալդ արագ թռչելով,
Անցել է գարուն եւ տօթ ամառ,
Դալիս է աշուն քեզ ցաւ բերելով:

Թողիր քո տունդ, հեռացիր, գնա,
Քանի որ ասոր ծաղկալի քամին
Կովկասի գլխից հարաւ անցնելով
Դեռ եւս քեզ չէ հասել տակաւին:

Թռիր, սլացիր, խաղաղ օդի մէջ,
Լեռներ եւ ձորեր խաղալով անցիր,
Գնա համարձակ քո սովոր տեղդ,
Գտիր հին բունդ եւ նորան իշխիր:

ՄԱՐՏ. ՇԻՐԻԱՊԵԱՆ

ԲԱԼԱԽԱՆԻ

Բազուից դեպի արևելք, 12 վերստ հեռաւորութեամբ՝ Թրքական Բալախանի, Սաբունչի և Բամանի գիւղերի միջավայրում փռւում է մի ընդարձակ լեռնադաշտ, որ ահագին քանակութեամբ նէֆտ է մատակարարում ամբողջ Ռուսաստանին և արտասահմանին։

Դա Բագուի նէֆտահանքն է։

Գնացքը, որի մի ճիւղը հասցրած է մինչև Սաբունչի գիւղը, երբ կանգ է առնում կայարանի մօտ, ձեր առջևը փռւում է բրգերի անտառ, որոնք բոլորն էլ նէֆտից սևացած փոշոտ և կեղտոտ են, սկսած ամենահասարակ *վիշկաներից* [1] մինչև ամերիկական *Նօրնեղեան վիշկաները*։ Իւրաքանչիւրը այդ բուրգերից ունի իւր մէջ նէֆտի մի խոր, որտեղից արտադրում են ու նէֆտը։

Գետինը Բալախանիում նոյնքան նէֆտոտ, ցեխոտ և կեղտոտ է, որքան և տները, բուրգերը, ծառերն ու թփերը, և նոյն իսկ այնտեղ դործող ահագին բազմութիւնը՝ բաղկացած ամեն ազգերից։

Նէֆտի խորերից դուրս եկող շոր ջրերից կազմուած

1. Նէֆտի խորերի վրայ կանգնեցրած փայտեայ բրգերը կոչւում են վ ի շ կ ա։

ԲԱԼԱԽԱՆԻ

Ընդհանուր տեսքը Սաբունձի կայարանի մոտից:

լճեր, նէֆտի ամբարներ, ճահճանման տեղեր բռնում են այն տարածութեան մեծ մասը, հարիւրաւոր մեքենաներից դուրս ժայթքող շոգին խոնաւացնում է օդը, խողովակներից բարձրացող նէֆտային սև ծուխը ծածկում է արեգակի դէմքը, մեքենաների, շոգեկաթսաների, գործիքների գործած խառն ի խուռն այլազան աղմուկը ականջ են խլացնում, այս-այն կողմ անդադար վազվզող կեղտոտ հագուստով գործաւորներ, ճռնչող թրքական սայլեր, կառքեր՝ շարեցնում, ամեն կողմ տարածող տելէֆոնի և ելեքտրական ճրագների լարերի քանակութիւնը զարմացնում. մի տեղից բղխող նէֆտախառն շագանակագոյն շոր ջուրը, միւս տեղից մոխրագոյն ցեխը, մի այլ կողմից հոսող սրճագոյն նէֆտը, որի երեսին բռնել է գեղարուեստական գոյնզգոյն մի փրփուր, զանազան առուներ, առուակներ, լճակներ, աւազաններ, ընկած գործիքներ և թանձրացած նէֆտի կոյտեր կտրում են անցուդարձի ճանապարհը. ամեն բոլէ կոխում էք կամ մի ոտք թարձրութեամբ փոշու և կամ նէֆտից դոյացած ճահիճների մէջ, ամեն կողմից վրադ է սրսկւում կամ շոգիի թանձրացած կաթիլներ, կամ խողովակներից դուրս ցատկոտող կայծեր և մրուրի հատիկներ, կամ նէֆտի կաթիլներ և կամ անցնող կառքերի անիւներից դէպի քեզ ցատկող ցեխի շատրրան . . .

Բալախանիի մէջ գործում են զանազան ազգութիւններ: Գերմանացիներն են մեքենագէտները և գլխաւոր երկաթագործներն ու վարպետները. Ռուսները՝ կառավարիչներից մի մասը, հասարակ դարբիններ, հիւսներ. Հայերը՝ կառավարիչներ, հանքատէրեր,—իսկ նրանց հասարակ դասը միմիայն մշակներ,—և Թիւրքերը՝ կառապաններ և սայլապաններ, գիշերապահներ ու ջուր բերողներ:

Այս բոլոր ազգութիւնները անդադար գործում են



Ամերիկական սիստեմով փորուած Ալֆոն խոր:

գիշեր ցերեկ, գործում են տաժանելի աշխատութեամբ։

Մեր փոքրիկ ընթերցողներին մի այլ անգամ մանրամասն կրծանօթացնենք Բալախանիի հետաքրքիր, բայց դաժան կեանքի հետ։ Իսկ այժմ միայն բաւականանում ենք նրա հայկական նոր լեզուից, հետևեալ կտորը, իբրև նմուշ, առաջ բերելով.

ՌաբՕչու հետ կուզարկեմ զառՕղլ մի ստեՕխ դիդ-մոլի ոտուրա, որից երկու պապրուրկու կըշինես, չորս կանեցն էլ նարեզատ կանես, մէկը կրուպկի ղեզրա, երկուսը զազոլի, մէկն էլ ամերիկանսկի մեղկի. պա-ժաղատա շուտ հասցնես, պատանՕյ ղինեսն խարար ա ըլել, բուրուղլ ուժե սատանՕղկայ ա . . .

ՍԻԿՈՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԹՒԱԿԱՆ ԲԱՌԵՐ.

Որ ի բան համբելիս կամ հաշուելիս և կամ մի բանի մեծութիւնն ու փոքրութիւնը ցոյց տալու համար գործ ենք դնում մէկ, երկու, երեք և ուրիշ համրանք նշանակող բառեր։ Ամեն ազգի մէջ համրանքը մէկից մինչև տասն է, երկու ձեռքի մատների թիւի չափ, ինչպէս՝ մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը կամ եօթն, ութ (և ոչ ութը), ինն կամ ինը (և ոչ *ինը* կամ *ին*), տասը կամ տասն։

Տասը որ լրանում է, նրա վրայ աւելացնում ենք կրկին մէկ, երկու, և այլն, ասելով՝ *տասանմէկ*, որ կը-նշանակէ՝ տասն ու մէկ, կամ՝ տասն և մէկ։ Յետոյ՝ տասներկու (չենք ասում՝ տասնըերկու, *ը* չենք աւելցնում ձայնաւորից առաջ), տասներեք, տասնըչորս, տասնըհինգ, տասնըվեց, տասնըեօթը (*ը* ենք աւելցնում երկբարբառից առաջ), տասնութ, տասնիննը, քսան, քսանը-մէկ, երեսուն կամ եռսուն, քառասուն կամ քառսուն, յիսուն (ուղիղն է հիսուն, որ է հինգսուն), վաթսուն (և ոչ վացսուն կամ վաթսուն), եօթանասուն, ութսուն, իննըսուն, հարիւր, հազար, տասը հազար, հարիւր հազար, միլեոն, երկիլեոն, քառիլեոն, հինգիլեոն, վեցիլեոն, և այլն։ Այս վերջին-

ները, երկիլեոնից սկսած՝ այնպիսի մեծ թիւեր են, որ ասել կարող ենք միայն, առանց նրանց մեծութիւնն ըմբռնելու։

Ինչպէս կան անչափ մեծ թիւեր, նոյնպէս կան և անչափ փոքր թիւեր։ Մեծ թիւերը մէկից սկսումն բարձրանալ, եւ որքան բարձրանում, այնքան խոշորանում են. փոքր թիւերն էլ դարձեալ մէկից սկսած ցածրանում են, և որքան ցածրանում, այնքան մանրանում են։ Օրինակ երկուսը մէկի կրկնապատիկն է, այսինքն մէկից մեծ է երկու անգամ, իսկ *կէսը՝* մէկից փոքր է երկու անգամ։ Մէկից փոքր թիւերն ասւում են կոտորակ։ Կոտորակների մասին խօսում է թւաբանութեան մէջ։ Կոտորակների մեծութիւնն ու փոքրութիւնը իմանալու համար, պէտք է գիտենալ, թէ ինչ կընշանակեն *համարիչ* և *յայտարար*։ Որքան մեծ լինի կոտորակի յայտարարը, այնքան փոքր կըլինի կոտորակը։ Երբ որ ասում ենք *մէկ միլեոնորդ*, այստեղ յայտարարն է մէկ միլեոն, ուրեմն դա մէկից *մասը* է մէկ միլեոն անգամ։ Եթէ մէկ թաղարի մէջ մէկ միլեոն ցորեն կայ, ուրեմն նոյն թաղարի մի միլեոներորդականը մէկ հատ ցորեն է և ոչ թէ մի միլեոն ցորեն։ Եթէ մի հօտի մէջ կայ հազար ոչխար, ուրեմն նոյն հօտի մի հազարերորդականը մէկ ոչխար է, երկու հազարերորդականը՝ երկու ոչխար, երեքհազարերորդականը երեք ոչխար, մէկ խօսքով ամեն *մէկ հազարերորդականը* մէկ ոչխար է, ուրեմն հօտի հազար հազարերորդականն է ամբողջ հօտը, որ է հազար։ Այսպէս էլ ահա մի քառասուներորդական փութն է մէկ ֆունտ, մի հարիւրերորդական մանէթն է մէկ կոպէկ եւայլն։

Թւական են ասւում և *առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ*, և այլ այս կարգի բաները։ Փոխանակ *մէկերորդ* ասելու՝ ասում ենք՝ *առաջին*, այսպէս և *երկրորդ, երրորդ, չորրորդ*, իսկ դրանցից բարձր եղած թիւերի վեր-

ջից աւելացնում ենք՝ երորդ, ինչպէս՝ հինգ—երորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, (և ոչ ութներորդ), իններորդ, (և ոչ իներորդ), տասներորդ, տասնըմէկերորդ, տասներկուերորդ, տասներեքերորդ, տասնըչորսերորդ, և այլն։

Ինչպէս տեսանք՝ թուական բառերից միայն երկուսն ունին ը կամ ըն վերջաւորութիւն, ինչպէս եօթը կամ եօթն, տասը կամ տասն, իսկ ինը մէկ ն-ի տեղ ունի երկուսը և ասում է ինն և ինը. ասում ենք՝ ինն անգամ, իննից յետոյ, ինն արշին, և՝ ինը հոգի, ինը կարաս, ինը ոչխար, ինը մարդ։

Շատ բարբառներում փոխանակ ասելու մէկ, ասում են մին։ Այստեղ վերջին ն-ը առը մին բառի անբաժան մասն է, և երբ հարկ է լինում, վրան աւելնում է էլի մէկ ն, ինչպէս մինն այսպէս և միւսն այնպէս, մինն ինձ, մէկելը՝ քեզ. երկուսից պէտք է մինն ընտրել, մինը թող, միւսը վեր առ. մինը տուր ինձ, մինը դնաց։ Պէտք է զգուշանալ և չըգրել՝ մին ասաց, մին գնաց, ինչպէս գրում են ոմանք։

Գ. ԱԳԱՅԵԱՆՑ

ՀԱՆԵԼՈՒԿ

Մի քառ ասեմ՝ ութ տառ ունի,
Այդ ութ տառը երեք վանկ ունի,
Ամեն վանկն իր միտքն ունի,
Ինչպէս ուզես քաժանի:
Առաջի վանկն է աշխատութիւն,
Որ գիւղացին է պարապում:
Երկրորդ վանկն է դերանուն.
Երրորդն՝ երբ չըգտնես,
Լաւ կանես լապտեր վառես:
Թէ լապտերի առաջ մտածես,
Հաւատացիր շուտ կըգտնես:
Երկրորդ վանկի մի տառ թողցրու,
Առաջին վանկին կպցրու,
Մի սիրուն թռչի ծաղիկ կըստանաս,
Թէ պարտէզում՝ քիչ մնացաս:
Առաջարկածս քարդ քառ է.
Մի նշմարելի տոն է.
Ով որ գտնէ՝ արամիտ է:

ԽՆԴԻՐ.

Առաջար. Յ. Տէր Մարտիրոսեանցի:

				1	1					
			2	2	3	4				
		3	5	6	7	8	2			
	4	9	10	11	12	13	14	15		
5	16	17	18	19	20	21	22	23	24	
6	25	26	27	28	29	30	31	32	33	34	35

5, 9, 16, 17, 15, Պատմական անուն՝ սպասպանուելու գործիք։
2, 32, 11, 1՝, Թշնամու հասկանիշը։
12, 14, 23, Մի քաղաք Թուրքաց Հայաստանում։

20, 29, 28, Կաթնեղէնի ամենաընտիրը։
25, 19, 18, Ազգանուն։
13, 3, 10, 31, 20, 7, Ամենամօտ արենակցութիւնը։
4, 22, 34, 33, Քրիստոս քարոզած մեծ խոսքով։
21, 26, 30, 35, 8, Կուռք ժողովրդական քառով։
6, 24, Էական բայ, առաջին դէմք, անցեալ։

Այս բառերը գտնելուց յետոյ դասաւորելով իւրաքանչիւր տառը իր համապատասխան թիւ ունեցող քառակուսու մէջ, կըստացուի հետեւեալը։ Մէկը մեր յայտնի և հին գրողներից, մէկի անուան առաջին տառը, 4ը նրա ազգանունը։ Իսկ 3ը 5ը, 2ը, և 6ը նրա առաջին և նշանաւոր հեղինակութեան վերնագիրը։

ՌԵԲՈՒՍ

„Աղբիւրի“ № 10-ում տպուած Ռեբուսը կարդացել են՝

Պ. ս. Սոկրատ Տէր-Ղազարեան եւ Լեւոն Տէր Բաղդասարեանց։

„Լոյր որդեակ, խրատու հօր քո եւ մի մերժեր զսէրն մօր քո, զպսակ շնորհացն քո կալցես զլուխ„։

1891 թ.

„ԱՂԲԻՒՐ“ եւ „ՏԱՐԱԶ“

XI տարի II

Առաջիկայ 1891 թ. յունուարի մէկից, ինչպէս արդէն յայտարարել ենք **Աղբիւրը** կը հրատարակուի նոյն ծրագրով եւ ուղղութեամբ: Առանձին ինամք կը տրուի մանաւանդ **մանկական** բաժնի վրայ, իսկ ծնողների մասը նայած բաժանորդներին, կը հրատարակենք առանձին գրքոյկներով տարին մի քանի անգամ:

Տարազը կը հրատարակուի շաբաթը մի անգամ՝ իւրաքանչիւր №-ը դարձեալ երկու թերթից, ինչպէս այժմ՝ ամիսը միանգամ է հրատարակւում:

Մենք մեզ միշտ նեցուկ ենք համարել հայ ժողովրդի եւ հայ երիտասարդութեան անկեղծ համակրութիւնը, որ տարիների ընթացքում՝ ամենասիրալիր կերպով վայելում՝ ենք: Մենք թանգ ենք գնահատում՝ այդ համակրութիւնը եւ խոնարհութեամբ ընդհանուրի ցանկութեան ձեռնարկում՝ ենք

«Տարազ» Պատկերազարդ Թերթի

հրատարակութեան:

Մեր յարգելի ընթերցողներին, որոնք արդէն փորձով գիտեն թէ մենք միշտ ոչ միայն մեր խոստացածն ենք կատարում՝, այլ աշխատում՝ ենք եւ ամեն ճիգ թափում՝ մեր ձեռնարկութիւնները աւելի՝ շքեղ եւ փառաւոր կացուցանել, աւելորդ ենք համարում՝ նոր խոստումներ անել:

ԸՆՏԱՆԻՔԸ

ԿՈՄՍ Ա. ԴԸ ԴԱՍՊԱՐԼԻՆԻ

Գ.

ԿԻՆԸ

Այս առաջին մասն Նպատակն է, ինչպէս արդէն յայտնի է, ցոյց տալու, թէ որոնք են ընտանիքի էական տարերքը։ Իմ բռնած ուղղութեան համեմատ, ես ընտանիքից դէպի զոյգը գնացի, իսկ այժմ զոյգից գնում եմ դէպի այն երկու անդամներից մէկը, որոնցից բաղկանում է այդ զոյգը։

Ճշմարիտ, անկարելի է չըտեսնել, որ այդտեղ կայ մի անձն, որ իր Ներկայութեամբ և ազդեցութեամբ կենդանացնում և զարդարում է ամեն բան։ Իշխանութիւնը, տեսչութիւնը ուրիշ տեղ կարելի է գտնել, իսկ այստեղ ըզմայլելի դեղեցկութիւնն է թագաւորում. այստեղ են կեանքի սկզբունքը, երջանկութեան էական տարրը։ Ես հասկանում եմ թէ ինչի մի քիչ չափազանցութեամբ ասել են այս խօսքը՝ „Ընտանիքը— կինն է“։

Ժէնէս քաղաքում, երբ ես տղամարդկանց մի խումբի Ներկայութեամբ խօսում էի այդ մասին, ես իրաւունք ունէի մերձաւորապէս այս խօսքերը ասել Նրանց. „մենք այժմ միայն ենք, տանտատանի, ուրեմն անկեղծ սրտով կարող եմ ձեզ ասել թէ ինչ արժողութիւն ունին կանայք, ես կարող եմ խոսել այն բարութեան մասին, որ Նրանք մեզ վրայ ունին, այն մեծ ազդեցութեան մասին, որ մեզ վրայ գործում են. բայց այս, ինարկէ, մեր մէջ թող մնայ“։ Բայց այժմ գուցէ մի քանի կանայք արժանի համարեն այս գիրքը կարդալու, բայց վնաս չունի, միթէ Ճշմարտութիւնը կարելի է ծածկել։ Ես չեմ շողոքորթում, այլ անկեղծ եմ խոսում, ուրեմն ինչի՞ սիրտ վախենամ անկեղծ Ճշմարտութիւն քարոզելու։

Անօգուտ չեմ համարում ասել, որ իդեալական սեռի արհամարհանքը, երբեւ ստորին քաղաքակրթութեան յատուկ, գուցէ և մեր մէջ ևս դեռ գոյութիւն ունի,

թէև մենք նման չենք այն վայրենիներին, որոնք ծեծում են իրանց իսանները, ենթարկում են նրանց տաժանակիր աշխատանքի և իրանք մահ են գալիս ձեռքերը ծալած՝ իբրև դերագոյն էակներ, բայց դարձեալ մեր նախնական կոչումը թեան հեռքերը պահպանում ենք. ոչ միայն մի քանի անհաւասարութիւններ չեն ջնջուած մեր օրէնքների մէջ, այլ և մի քանի չնչաւոր գուռզութիւններ չեն անհետացել մեր բարքերից։ Կան սրդամարդիկ, որոնք արհամարհանքով են խօսում իգական լմացականութեան մասին, բայց այդ տեսակ տղամարդիկ իրանք բնաւ լմացական չեն։ Ոգուշանանք։ Կանանց յարգելը ընտանիքի և ընկերութեան հարկաւոր հիմունքից մինն է։ Դուրս ձգեցէք այդ հիմքը, մեր առաջ կանգնած կըմնայ միայն բիրտ մարդը, անզուսպ մարդը։ Եւ տեսնելով թէ մինչև ուր է իջնում, այն ժամանակ հասկանալի կըլինի Ս. Գրքի խօսքը. „Լաւ չէ, որ մարդը միայն լինի։

Յարգել կանանց՝ այդ չի նշանակում թէ մենք յաստատում ենք նրանց մի անվախ տեղ, որ իրանց չի պատկանում։ Կանանց կոչումը, առանց սորին լինելու, այնուամենայնիւ ենթադրեալ է. բայց այդ հոգ չէ, որովհետև ով կըցանկայ աւելի բարձր դնել, նրան աւելի կրատրացնէ։ Կընշանակէ՝ չեն հասկացել այն դերի մեծութիւնը, որի հետ աշխարհս երեսին ոչ մի բան չի կարող համեմատուել։ Կին-մարդիկը նոյնքան անհաճոյ են, որքան մարդ կանայքը։

Խօսում են նոյնպէս և կանանց ազատութեան (էմանսիպացիա) մասին։ Կարծես թէ մի հիանալի գիւտ են արել։ Նրանից առաջանալու արդիւնքի մասին կարող ենք դատել այն ապաւորութիւնից, որ մեզ վրայ թողնում են այն կանայք, որոնց խօսակցութիւնը, նիստուկացը կորցրել են համեստութեան և քաղցրութեան վայելը. այն կանայք, որոնք հրամայում են, չեն ճանաչում ամուսնու հեղինակութիւնը, քարտաքարդէա, վարդապետ կանայք, այն կանայքը, որոնք խնդիրներ են մշակում և լուծում, տէրութիւնների բախտն են որոշում և պատրաստ են լպահանջել հարկին՝ պատերազմ էլ հրատարակել։

Արդէն շատ կանանց ձայնը առնացի հնչիւն ունի. շատ կանայք ձգտում են մինչև անգամ տղամարդի հագուստ հագնելը սովորական դնել և այն ձևով, որով նրանք բարևում են, նայում են ձեզ, մարդ մոռանում է ինչ որ պարտական է դէպի նրանց։ Բայց, յուսանք որ այս մոլորութիւնը ժամանակաւոր է։ Եւ եթէ այդ ամենի վրայ աչք ածենք և ընտրութիւններին մասնակցելու, հիւպատոսում քարոզելու և ամբիոնից վարդապետելու իրաւունքների պահանջը, այն ժամանակ մենք մեր ձեռքով լուծած կըլինինք կնոջ սորոյցնելու խնդիրը։

Եւ ինչի՞ այդ բոլորը, երբ կը-

նոջ բուն կոչումը այնքան գեղեցիկ է։ Աւետարանը մի ստուգաբանին վարիկութեամբ կարողացել է որոշել կնոջ իսկական վիճակը այս աշխարհում։ Նա կարողացել է բարձրացնել կնոջը ուսանց նրան տեղահան անելու։ Երբ ես մրանում եմ այն նոր ընտանիքի յարկի տակ, որի կազմակերպութիւնը մենք տեսանք, ում վրայ են նայում աչքերս, այդտեղ վարանելու տեղիք չկայ. ահա մինը, որ իր ձեռքի մէջ բռնած ունի ընդհանուրի ճակատագիրը. ոչ ոք չի կարող ասատեղ այնքան բարիք, կամ՝ աւելի՝ այնքան չարիք գործել, որքան նա։

Այդ մինը—կինն է և նա այդտեղ իր թագաւորութեան մէջ է։ Ամէն ազամարդը ընտանիքի գլուխն է, կինը բնակութեան թագուհին է։ Եւ որքան բան կայ այդ համեստ խօսքի մէջ։ Այդ կրնշանակէ մտերմական քաղցր օջախի շուրջը. այդ երջանկութիւնն է իր ամենասարդ և ամենաճշմարիտ ձևի տակ. այդ այն տպաւորութիւնն է, որ ուսանց ազմուկի գործում է ամուսնու, երեխաների, ծառաների վրայ. այդ քաղաքականութեան, ամենօրեայ հսկողութեան, օրինակի, մտերիմ խոստացութեան անսահման զօրութիւնն է. այդ սրտի բանաստեղծութիւնն է, որ խառնւում է մեր ամենօրեայ պրոզայի հետ. այդ՝ երկնքի մի անկիւնն է, մի կատարելոյն անկիւնը, որ տեսանելի է մշուշի միջից։

Կինը ընտանիքի սիրելի և բարերար կենդրոնն է. նա այնպիսի մի գրաւիչ զօրութիւն ունի, որի ազդեցութիւնից ոչ ոք կարող չէ և չի ցանկանալ փախչել։ Ամեն մարդ սեղմւում նրա շուրջը։ Եւ այնտեղ, ուր նա չկայ, ամբողջ ընտանիքը կարծես լիքի լուծուած է։ Միայնակ ազամարդը շատ քիչ անգամ իր տան ճաշակն ունի և սովորաբար երբ մայրն անհետանում է, ընտանիքը բարոյապէս ցրւում է։ Հոր մահը ևս ծանր հեռանքներ է արտադրում, բայց ոչ այդպէս. այրիի մօտ օջախը յարատևում է, երեխաները մնում են այդտեղ խմբւած. լացում են, բայց ընտանիքը չի անհետանում։

Ես միայն մի բան գիտեմ որ բացատրում է այս ամենը։ Ասուած ուել է կնոջը հմայք։ Հմայք. որքան բան է արտայայտում այս հինգ տառից բաղկացած խօսքը։ Կինը մեղանից ուրիշ տեսակ է հասկանում լրերը. նա զգում է սրտի եռանդով. նա քիչ դատողութիւն ունի, բայց շատ համակրութիւն, ուստի տեսէք նրան գործելիս։ Նա մեղմացնում է հարուածները, հաշտեցնում է վէճերը, հարթում է դժւարութիւնները, լուղ է քսում անիւների մէջ։ Այդ ոչինչ է և ամեն բան է. մի խօսք, մի նայուածք և թշնամական տրամադրութիւնները անհետանում են, կրքութիւնը վարիկում է, մարդիկ երանց ուրախ են զգում. այդ երանց սրտով է երևում, բայց շատ անգամ չեն գուշակում այն քաղցր ձեռքը, որ գործում է ուսանց երևալու։ Կամ աւելի ճիշտ ասած՝ գուշակում են

միայն այն օրը, երբ մի որ և է պատճառով այդ տեղը դատարկ է մնում։ Այն ժամանակ ամեն բան տխրամած է թւում. այն ժամանակ տան մէջ ցուրտ է, հացկերոյթները անցնում են տխուր և մի ընդհանուր յուզի սրամադրութիւն է տիրում։ Ինչի՞, որովհետև հմայքն անհետացել է։

Վաղը, մի երկու օրից յետ կըվերադառնայ և դարձեալ ամեն բան կըկենդանանայ մի ըսպէում, ինչպէս տաւերի մէջ ընկղմած մի հովիտ, որ լուսաւորւում է արեգակի ճառագայթներով։ Բայց այն թշուառ տները, ուր կինը այլ ևս չի երևալ և այն թշուառագոյն տները, որտեղ կինը չի կարողացել կատարել իր պաշտօնը, աւա՜ղ, նրանց դժբախտութիւնը ով կարող է պատմել։ Այդտեղ մարդ, երեխայ, կորածի, մոլորածի նման են զուր որոնելով այն բանը, որի տեղը դատարկ է։

Եթէ եղել է մի ճշմարիտ կին, մի ճշմարիտ մայր, նրա յիշատակը կըշարունակէ կատարել այն, ինչ որ նա սկսել էր. եթէ կայ մի ճշմարիտ հայր, խրատիչներին համար շատ բան կանի, և սակայն մի գործ կայ, որ միայն կինը կարող է կատարել. առանց կնոջ տունը կըլինի ճանձրութեան, պաղութեան, դուեհկութեան և դուցէ կրոնութեան հանդիսարան։

Կինը տան մէջ այն ընդհանուր խոստովանանքն է, որի մօտ վազ է տալիս ամեն մարդ, ով որ մի վիշտ, մի դանդատ ունի արտայայտելու, մի ախորժեան կընճիռ ունի լուծելու, մի ցաւ ունի ամոքելու։

Կինը ընտանիքի հմայքը չէ միայն. նա շատ պարագաներում նրա խղճմտանքի և արժանաւորութեան արտայայտիչն է։

Մենք աղամարդիկս քիչ-կամ կրոպա խղճմտանք ունինք, իսկ շատ անգամ կանայք ամբաստանում են որ բոլորովին զուրկ ենք նրանից . . . Բայց բանը նրանումն է, որ մենք չունենք քնքշութիւն, չենք ուսումնասիրում խնդիրները մանրադիտակով։

Բայց այդ միշտ մի չարիք չէ. այդ կերպով մենք փրկւում ենք խղճահարութեան հիւանդութիւնից, որին ենթակայ են կանայք. մենք ընթանում ենք աւելի ամուր քայլով և մեր միտքը սակաւ է բաղադրւում։ Ես չեմ ցանում աղամարդին լ նպաստ այս նկատողութիւնը անելով. նա նոյնպէս իր մեծ պաշտօնն ունի ընտանիքի մէջ և ճիշտ նոյն իսկ այն պատճառով որ նրանք օժտւած են տարբեր յատկութիւններով, երկու ամուսինները լրացնում են մի միջոց։

Բայց եթէ կինը շատ խղճահարութիւն ունի, նա մեզ արթուն է պահում, մեզ, որ չունենք նրանից բաւականին շատ։ Եթէ կինը զղջում է շատ և յաճախ անգամ արամադրւած լինելով ամենից շուտ որոնելու ամեն մի կատարւած իրողութեան և ամեն մի վնասւած գործի ցաւալի կողմը, նա, ի հարկէ, ընդունակ է մեր խաղաղութիւնը խանգարելու։ Ո՞վ չի յիշում այն դիպւածները, երբ

ընտանիքի մօր մի հատիկ խօսքը արձարձել է այնպիսի մի բարոյական խնդիր, որի յարուցանելը մեր մտքից անգամ չէր անցնում։

Սկզբում մենք զայրացել ենք, գանելով որ այդ տեսակ խնդիրները անպատեհ են, բայց երբ լաւ մտածել ենք, հարցաքննել, երբ խօսել է մեր խղճմտանքը, մենք շնորհապարտ ենք եղել դէպի նրան որ մեր առաջ դրել էր մի ճանճրոյթ կամ մի գոհ։

Այդ տեսակ գոհերը երբէք չեն կորչում. ոչ մի բան այնքան չի նպաստում մեր կատարելագործութեանը, ինչպէս մեր մէջ կատարած այն յեղաշրջումները, որ ստիպում են մեզ ձեւակերպել մեր վարմունքը պարտաւորութեան տեսակէտից։ Ուրեմն կինը՝ բառի ամենակրկական իմաստով՝ ընտանիքի խղճմտանքն է։

Թող նայեն և նրա արժանաւորութիւնը. այդ այնքան պարզ է որ հարկ չկայ պնդելու։ Երբ կինը հեռու է մենք դատարում ենք մեզ տանձելուց, քիչ կամ շատ ընկնում ենք այնպիսի մի գաղտ վիճակի մէջ, որ կոչում են տանձարձակութիւն։

Տանձարձակութիւնը իր տարիքանները ունի. այնպիսի կլուբ կամ սրճարաններ կան, որտեղի վարած կեանքը անընդունակ է շինում մեզ լաւ ընկերութեան մէջ երևալ։ Այն միտքը, թէ պէտք է մի քիչ արդուզարդով զբաղել, պէտք է քաղաքավարութեան պատրաստել, պէտք է հրսկել իր վրայ և կենդրոնանալ, երբ մի խօսակցութիւն է սկսած, որպէս զի որ և է մի սխալ քայլ, մի անքաղաքավարի վարմունք կամ մի անպատեհ խօսք չըմտցնել. ահա այս միտքը մեզ տանջանք է պատճառում։ Բայց երբ ընդելանում ենք այս մտքի հետ, արդէն սովորութիւնը մեզ շինում է բարեկիրթ։

Կայ և այնպիսի տանձարձակութիւն երբ բարեկիրթ մարդկանց արտաքին քաղաքավարական ձևերը պահելով հանդերձ, մեր ներքին կարգապահութեան վրայ ուշք չենք դարձնում և ընկնում ենք չափազանցութեան, կոպիտ գռեհկութեան մէջ։

Կինը սահմանուած է մեզ այսպիսի դժբախտութիւններից զերծ պահելու համար։ Նրա ներկայութիւնը կանգնեցնում է կոպիտ վարմունքը. նա ստիպում է իւրաքանչիւրին հսկելու իր ձևերի և նիստուկացի վրայ. այլ և նա ազդում է հոգու նիստուկացի վրայ, եթէ կարելի է այսպէս ասել։ Կնոջ մէջ այսպիսի մի ընակը բան կայ. նրա բարոյական հակումները այնպիսի մի կենդանի զգայութիւն ունին, որ ամեն մի ցած գռեհկի բան վիրաւորում են նրան և նա բնազդմամբ զգում է։ Կինը կարդում է մեր մէջ և մենք զգում ենք ու հասկանում, որ ինչքան կարելի է, պէտք է չըվիրաւորել նրա զգացումը։

Այս իմ նկարագրած խղճալն է։ Ես ցոյց եմ տալիս կինը այնպէս, ինչպէս պէտք է լինի։ Նրա սիրան էս ասպահանուած է մի խօսակցութիւն է սկսած, որպէս զի որ և է մի սխալ քայլ, մի անքաղաքավարի վարմունք կամ մի անպատեհ խօսք չըմտցնել. ահա այս միտքը մեզ տանջանք է պատճառում։ Բայց երբ ընդելանում ենք այս մտքի հետ, արդէն սովորութիւնը մեզ շինում է բարեկիրթ։

Կայ և այնպիսի տանձարձակութիւն երբ բարեկիրթ մարդկանց արտաքին քաղաքավարական ձևերը պահելով հանդերձ, մեր ներքին կարգապահութեան վրայ ուշք չենք դարձնում և ընկնում ենք չափազանցութեան, կոպիտ գռեհկութեան մէջ։

Կինը սահմանուած է մեզ այսպիսի դժբախտութիւններից զերծ պահելու համար։ Նրա ներկայութիւնը կանգնեցնում է կոպիտ վարմունքը. նա ստիպում է իւրաքանչիւրին հսկելու իր ձևերի և նիստուկացի վրայ. այլ և նա ազդում է հոգու նիստուկացի վրայ, եթէ կարելի է այսպէս ասել։ Կնոջ մէջ այսպիսի մի ընակը բան կայ. նրա բարոյական հակումները այնպիսի մի կենդանի զգայութիւն ունին, որ ամեն մի ցած գռեհկի բան վիրաւորում են նրան և նա բնազդմամբ զգում է։ Կինը կարդում է մեր մէջ և մենք զգում ենք ու հասկանում, որ ինչքան կարելի է, պէտք է չըվիրաւորել նրա զգացումը։

Այս իմ նկարագրած խղճալն է։ Ես ցոյց եմ տալիս կինը այնպէս, ինչպէս պէտք է լինի։ Նրա սիրան էս ասպահանուած է

մարդու սրտի սէջ և նրա նման չի կարող կատարել իր Ճշմարիտ դերը, եթէ իր մէջ մի ազնուական վսեմութիւն, մի նոր ծնունդ առած չդգայ։ Կինը կարող է, աւա՜ղ, փոխանակ իւրայիններին համար լինելու աւաջնորդութեան և երջանկութեան գործիք, լինել մեծ անկարգութեան և թշուառութեան աղբիւր։ Առանց խօսելու ամբողջական ստրկանութեան մասին, նոյն իսկ այն թերութիւնը, սրտի այն գօրութիւնը, որ շատ անգամ երևան է գալիս կնոջ մէջ, կարող է մի մեծ ստրկանիչ տարը հանդիսանալ իր շրջապատողների համար։ Ոչ, կինը մինչև չէ ընտանիքի բարերար կենդանին. ոչ, նա մինչև չէ ընտանիքի հմայքը. ոչ, նա մինչև չէ ընտանիքի խղճմտանքը և արժանաւորութիւնը։

Եւ սակայն ինչ որ գրել եմ, Ճշմարիտ է և ոչ մի տողը չեմ կարող չեռ առնել։ Իդէալական Ճշմարտութիւնը դարձեալ Ճշմարտութիւն է։ Պէտք է մնայն զննենք նրան այդ կերպարանքի տակ և այն ժամանակ նա մեզ կերևայ իր բոլոր գեղեցկութեամբ, իր բոլոր արժանաւորութեամբ։

Ի՞նչ գեղեցիկ է կնոջ դերը. ինչպիսի ընդունակութիւններով օժտուած է նա իր Ճշմարիտ պաշտօնի կատարման համար։ Ո՞հ, թող նա չդգաստ գտնի իր վիճակից։ Այդ վիճակից աւելի գեղեցիկ բան աշխարհի երեսին էլ չի կարող լինել։ Լինել աշխարհ նախախնամութիւն բոլոր իւրայիններին համար, լինել նրանց լոյսը, ուրախութիւնը. նրանց բարի շնորհը, լինել բոլոր բարձր երջանկութիւնների աւանդատուն, այդ քիչ բան չէ։ Հարիւրաւոր է ունենալ քաջութիւն,—նա ունի. հարիւրաւոր է ունենալ կարեկցութիւն.—ունի։ Նա բարձրացնում է ընկողներին, բարձրացնում է նրանց սիրելով, նրանց ներելով, նրանց Ճշմարտութիւնը ասելով։ Եւ ինչպէս է պատմում այդ Ճշմարտութիւնը։ Որպիսի քնքուշ եւանդով, որպիսի սիրով, որպիսի հաւատարիմ մաքրութեամբ։ Որքան նա աշխատում է չրվիրաւորել, չրսոտացնել։ Ինչպէս վէրքերը բուժում են նրա բարեսարշա ձեռքի տակ։

Ես չեմ կամենում, ես միտք չունիմ քննել իր ընդհանրութեան մէջ կնոջ դերը ընտանիքի ծոցում. իսկ այնինչ որ վերաբերում է ամուսին կնոջ կամ մօրը, այս մասին յետոյ կը խօսուի։ Սակայն մինչև այս մուտանանք այստեղ որ իւրաքանչիւր սերունդ, առաջին տարիներից սկսեալ պատկանում է նրան բացարձակ կերպով։ Եւ մինչև կշռել այդ առաջին տպաւորութիւնների խորութիւնը, երկարատևութիւնը և անեղծ ազդեցութիւնը։ Կրհասնի՞ մի վարկեան կեանքի մէջ, երբ կարողանայինք բոլորովին մոռանալ մինչ որ սորոնել ենք մեր մօր ծնկների վրայ։ Ես աւելին կասեմ. կրլինի՞ մի օր մեր կեանքի մէջ, երբ դադարէինք ուսանել մեր մօրից։ Ճշմարտի ընտանիքի ծոցում, այդ գործողութիւնը երբէք չի դադարում։

Այդ է այն տեղը, որ Աստուած պատրաստել է կնոջ համար։ Ամուսինն և մայր, նա իր առաջ ունի այն ամենամեծ պաշտօնը, որ կարելի է երազել աշխարհում։ Դուք յիշում էք երևի այն հիանալի պատկերը, որով վերջանում է Առակաց գիրքը.

„Ո՞վ կրնայ կին ժրագլուխ։ Նրա գինը աւելի է քան թէ մարգարիտ . . . Նա բարիք է գործում ամեն օր իր կեանքում, և բնաւ չարիք . . . Նա մեկնում է իր ձեռքը վշտացեալին և պարզում է ձեռքը կարօտեալին։ Նա բնաւ երկիւղ չունի ձիւնից իր ընտանիքի համար. բոլոր իր ընտանիքը կրկնակ զգեստ ունի հագած... Նրա ամուսինը յարգուած է դռներում, երբ նստած է ծերունիների հետ . . . Նա բաց է անում իր բերանը իմաստութեամբ և գթութեան օրէնքը նրա լեզուի վրայ է։ Նա ընում է իր տան գնացքը և երբէք չի ուտում ծուլութեան հացը։ Նրա երեխաները մեծանում են և կոչում են նրան երջանիկ. իր ամուսինն էլ գովում է նրան ասելով. „շատ դուստրներ ժրագլուխ են եղել, բայց դու բոլորին գերազանցեցիր . . .„

Այս է կինը Յիսուս Քրիստոսից առաջ։ Աւետարանի ազդեցութեան տակ մի քանի դէպեր մեղմացել են, պարտաւորութեան նուիրատուութիւնը ձևակերպւել է, կնոջ արտայայտութիւնը ստացել է աւելի քնքշութիւն և աւելի քաղցրութիւն, սակայն բուն հիմքը մընացել է. յայտնուած ճշմարտութիւնը մեծանում է և չի փոխուում։ Դեռ էլ այսօր ով որ քննած կըլինի կանանց ընտանիքի մէջ ունեցած սուրբ կոչումը, այն ամենօրեայ գործը, որ նրանց սպասում է, այն բեռները, որ ծանրանում են նրանց ուսերի վրայ, կըվկայէ անշուշտ Առակաց գրքի հեղինակի հետ որ բոլոր առաքինութիւններից ամենակարևորն մի այդպիսի դերի համար ժրագլխութիւնն է։

ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս առաջին գլուխը երկար չի լինի, բայց առանց գրելու չեմ անցնի։ Ընտանիքի և պարտաւորութեան մէջ այնպիսի մի սերտ կապ կայ, որ նրա շեշտելը անհրաժեշտ է։

Տկարացրէք պարտաւորութեան գիտակցութիւնը և կըտեսնէք թէ ինչ կըմնայ ձեզ ընտանիքից։ Դուք կունենաք միայն մի ստորացած ընկերակցութիւն, որի երկու ընկերները մէջ տեղ են բերել ամեն մինը իր անձը և փոշ որպէս զի կեանքի վայելքը քաշեն։ Դուցէ նրանց մէջ կըլինի բացի զգանից և մի փոխադարձ հակում որ կրտուի ինչքան կարող է տևել, բայց սէրը որքան շատ անկեղծ է երբ Աստծու աչքի տակ միանում է պարտաւորութեան մտքի հետ, նոյնչափ և վաղան-

ցուկ է, երբ այդ հիմքի վրայ չէ դրուած։

Այդ տեսակ ընտանիքի մէջ (պակաս չէ այնպիսիների թիւը, որոնք պատաւորութեան երկրորդական տեղ են տալիս) ամեն մարդ իր գործը կանի, կըզբաղՃանան, աշխատի կըտեսնեն, մի որոշ ասպարէզի ձեռք բերելու հետամուտ կըլինին և երեխաների ասպարէզը կըպատրաստեն։ Ընդունենք որ այդտեղ կայ մի որոշ բարոյականութիւն, որ ոչ մի ծանր անկարգութիւն չի գայ ամեն բան տակնուվրայ անելու, բայց այդտեղ կըվարեն այն սառուցեալ կեանքերից մինը, որով մենք յաճախակի գոհ ենք լինում։ Աստուած, որ մեզ համար պատրաստել է օձախի ուրախութիւնները, չի կանչել մեզ որ մենք միմեանց կողքին բոյսի նման աՃենք առանց կենդանի գորովանքի, առանց ազնիւ վառասիրութեան և առանց յառաջդիմութեան.

Երբ մարդ բաւականանում է միայն պատշաՃութեան և յարգանքի արտաքին ձևերի պահպանութեամբ, այդտեղ երջանկութիւն չի կարող լինել։ Եւ ինչպէս են վարուում. աշխատում են փախչել տնից և մեր ապականած հասարակութիւնը խնդրի լուծման այդ եղանակը ամենայարմարն է գտել. այնպէս են անում որ միմեանց չըտեսնեն, կամ քիչ տեսնեն, որ ամուսին, հայր կամ մայր, զաւակ լինեն որքան կարելի է սակաւ։ Եւ այդ բոլորի համար հնարուած կան պատրաստ և Ճարպիկ մեքենաները— դպրոցները, գրասենեակները, անհամար այցելութիւնները, հնարովի զուարՃութիւնները, որոնց միակ արժանաւորութիւնն է ժամանակը սպանել, Ճաշկերոյթները, ժողովները և թատրոնները։ Այդպիսով լաւ թէ վատ հասնում են օրուայ վերջին, տարուայ վերջին, կեանքի վերջին և՛ ամենայն կրաւունք ունիմ աւելացնելու՝ ընտանիքի վերջին, որովհետև այդ ընտանիքները, որոնք հազիւ ապրել են, չեն կարող յարատեւութիւն ունենալ, ըստ որում յաւիտենականութիւնը չի մընում նրանց յարաբերութիւնների մէջ։

Ուրեմն ընտանիքի մեծ կողմը երբէք հանդէս չի դուրս գալիս, նա է և մնում է մի տեսակ գաղտնիք, պրօզայիկ բառ, պէտք է նրա վրայով անցնել և անցնում են։

Ընտանիքը մի հաստատութիւն է. մի դեղեցիկ հաստատութիւն։ Ընկերութեան հիմն։ Ի պատիւ ընտանիքների ճառեր են արտասանում. ընտանիքի պաշտպանութեան ետևից են վազում, բայց ընտանիքի պաշտպանները նրանից շատ քիչ են օգուտ քաղում իրանց անձնական հաշվի համար և դուցէ մի վայրկեան էլ Ճաշակած չեն լինի այն անհամար բարիքներից, որոնք նա մատակարարում է։

Ո՜հ, ընտանիքը մի ուրիշ բան է քան թէ հաստատութիւն, քան թէ քաղաքական կարգի մի ուրիշ երաշխաւորութիւն, կամ եթէ կամենակ բարոյական կարգի։ Նա մի ուրիշ բան է քան թէ միջոց է մարդի համար իր անունը և

հարստութիւնը վոչնչացրելու ուրիշնեն. նա մի բարեկարգ կանոնաւորուած տուն, կամ մի տեսակ մասնաւոր կլուբ չէ, որտեղ մենք ապրոհով ենք, թէ կըգտնենք միշտ մի պատրաստ սեղան, կրակը վառուած, մեր հաշակով խօսակցութիւն կունենանք և միջոց սպանելու գործերից պարապ մնացած ժամանակը։

Ընտանիքի վրայ այդ տեսակէտից հայողները մոռանում են նրա մէջ պարտաւորութիւն մտցնելը։

Պարտաւորութիւնը, մտնելով այդ բնակարանի մէջ, կերպարանափոխում է նրան։ Նրա հետ թափանցում են ընտանիքի մէջ մեծ սէր, մեծ երջանկութիւններ, մեծ նեղշնչումներ, զարմացումներ և մեծ բանաստեղծութիւն։

Նիւթերով պարտաւորութեան հետ ընտանիքը ջերմանում և լուսաւորւում է։ Եւ ինչպէս՝ պարտաւորութիւնը նոյնպէս լուսաւորւում է շփուելով ընտանիքի հետ։ Պարտաւորութեան քաղցրութիւնը յայտնագործում է միայն ընտանիքը։

Պ. Կուզէն մի գիրք է շարադրել ճշմարտի, բարոյ և գեղեցկի վրայ։ Այդ գիրքը վաղուց գրուած է ընտանիքի վորձառութեան մէջ։ Կարծում են որ սկ. Կուզէնի գործադրուած երեք բառերը բաւական չեն. բարին միայն գեղեցիկ չէ, նա և քաղցր է, ուրախութիւն է ծնում, երջանկութեան է տանում։

Երջանկութեան այդ խնդիրը, որ դրուում է ամեն տեղ և որի մասին ես ինքս մտադիր եմ եղել մի անգամ ուղղակի խօսել, ահա նորից ներկայացնում է ինձ մի նոր ձևի տակ, պարտաւորութեան ձևի տակ։ Դրանից աւելի էլ ազնիւ մերձաւորութիւն ճանաչում ես։ Այո, գնանք նրա ետևից իր ամենօրեայ գոյութեան մէջ, այն ընտանիքի մէջ, ուր մենք մտել ենք. այդտեղ պարտաւորութիւններ կան ամենի համար, դժնդակ ջանքեր կան անելու, մի անդադար աշխատութիւն կայ կատարելու, որպէսզի օգտակար և սիրելի դառնան. այդ մենք կըտեսնենք որ ամեն մի ջանք ուրախութիւն է բղխեցնում, որքան մենք առաջ կըգնանք կեանքի դժնդակ շաւղի մէջ, այնքան մեր ճանապարհը լուսաւոր կըդառնայ և այն ժամանակ մենք կը տեսնենք այնպիսի ներքին բարեբաստութեան առատութիւն, այնպիսի խորին, նիւթական ուրախութիւններ, որոնց գոյութեան մասին աշխարհային ընտանիքը կասկած անգամ չունի։

Պարտաւորութիւնը և սէրը հանդիպել են միմեանց, կամ եթէ ուզում էք, հեղինակութիւնը և ազատութիւնը դրել են իրանց նախանամական հաշտութիւնը։ Քաղաքական ընկերութեան խնդիրը (պրոբլէմա) կոչում է իր հիմքով ընտանիքի պրոբլէմայի հետ։

Ես կանգ եմ առնում. այս մի քանի խօսքերը բաւական են ցոյց տալու որ պարտաւորութիւնների ուսումնասիրութիւնը մեր պարտականը նպատակն է եղել։ Այդպէս մենք մտնում ենք մեր

խնդրի մէջ մեծ դոնով։ Պարտաւորութիւնը մեր առաջից դնալով մեզ պիտի լուսաւորէ. նրա լուսով մենք կըընչմարենք այն Ճշմարիտ յարաբերութիւնները, որոնք Աստուած դիմնել է ընտանիքի դանազան անդամների մէջ. մենք կըտեսնենք նրանց գործերը, ուրախութիւնները, ցաւերը, ջանքերի միաբանութիւնը, նրանց օրհնեալ և կարող համերաշխութիւնը, նրանց ընթացքը դէպի գոյութեան գագաթնակէտը, դէպի ծայրագոյն նպատակը, դէպի յաւիտենականութիւնը։

(Թարգ. Քրիստ.) Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ հոկտեմբերի 24-ին Մոսկուայում փառաւոր հանդէսով տօնեց Լազարեան Ճեմարանի 75-ամեայ տարեդարձը։ Ուսումնական հաստատութիւններից, ընկերութիւններից շատերը շտապել էին իրանց զգացմունքը յայտնել շնորհաւորական հեռագիրներով եւ ուղերձներով։ Թիֆլիսից շնորհաւորել էին Կովկ. ուսումն. շրջ. հոգաբարձուն, դրաքննիչ պ. Գր. Ղարախանեան՝ իբրեւ նախկին սան Լազարեան Ճեմարանի, եւ մենք «Աղբիւրի» ու Ցարազի կողմից։ Այդ տօնախմբութեան մանրամասնութիւնները կըտպագրենք «Ցարազի» առաջիկայ №-ում։

*

Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը «Ցարազի» շաբաթաթերթի յայտնելու համար մեզ շընորհաւորական հեռագիրներ եւ նամակներ ուղարկողներին։ Թող ներեն մեզ, որ անկարող ենք բոլորեցուցց առանձին առանձին յայտնել մեր շընորհակալութիւնը եւ յարգանքը։

*

Ներսիսեան դպրոցում դարձեալ խնարիզներ են սկսել պ. Տեոչի դէմ։

*

Երեւանի թեմ։ դպր. հոգաբարձուները տեսուչ էին ընտրել պ. Ա. Սարգսեանին, բայց Վեհափառ Կաթուղիկոսը պարոնին չէ հաստատել այդ պաշտօնում։

*

Զուշուց մեզ գրում են՝ թէ հոգաբարձութիւնը եւ թէ ուսուցչական խումբն ու աշակերտները շատ գոհ են իրանց նոր տեսուչ պ. Նոիշէ Մարգարեանից, որ չընայած իր շատ երիտասարդ հասակին շատ խոհեմութեամբ եւ մեծ եռանդով է կատարում իր ընտանեաց պաշտօնը։

*

Ամսոյս 6-ին շնորհալի երդչուհի օր. Գենջեանի նուագահանդէսն էր Թիֆ. ժողովարանում։ Յարաբաղդաբար այդ օրը Թիֆ. թատրոնում բարեգործական նպատակով տրւող ներկայացումը արդեւք էր եղել նուագահանդիսի

յաջողութեանը։ Համեստափայլ երգչուհու երկրորդ նուագահանդէսը տեղի պիտի ունենայ 12-ին երեքշաբթի երեկոյեան կլինի դարձեալ Թիֆ. ժողովարանում։ Արժէ լսել օր. Գինչեանին եւ խորհուրդ ենք տալիս մնաւանդ մեր երաժշտասէր օրիորդներին գնալ այդ նուագահանդէսը։

*

Երէկ Օդէսսայից հեռագիր ըստացանք Եւրոպայում յայտնի երգչուհի Դիք Բուրինից, որ օրերս ուղեւորւում է Թիֆլիս եւ մի երկու կոնցերտ պիտի տայ այստեղ։

Անցեալ տարի Վիէննայում մենք առիթ ունեցանք լսել այդ շնորհալի երգչուհուն։ Դիք Բուրինին երգել է նախ Իտալիայի գանազան թատրոններում եւ ապա յայտնի տէնոր Ստռաճոյի հետ Բարցէլոն (Սպանիա) Լիցէում թատրոնում, որ նոյնչափ հռչակաւոր է, որքան Սկալան Միլանում։

ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Շուշի. Լէօ „Վերջին վէրքեր“ ձեր պատմական վէպը կրտսագրենք Տարազ շաբաթաթերթում։ Շատ շնորհակալ ենք ձեր անկեղծութեան համար։ Հաւատացէք ձեր այդ անկեղծութիւնը շատ թանգ ենք գնահատում։

Թիֆլիս. Օր. Ն. Ա. Ուրեմն շուտպեցէք երեքշաբթի օրւայ համար տոմսակ վեր առնել։ Հաւատացէք, որ եւ պէտք է, եւ արժէ լսել։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ Մ.Բ. Այդ էր մնացել, ի՞նչու, երբէք։ Մենք յունուարի վերջերում միայն այդ մասին կը-լսենք։

Թիֆլիս. Ա. Դ. Ձեր նամակը հենց տալել բոլորովին հաւատի ենք, որ փաստ է, բայց այնուամենայնիւ մեզ անյարմար է, եւ էլ կարիք չկայ։ Միթէ լոյսն ու խաւարը այդքան դժւար է միմեանցից ջոկել։

ՄոլԱՆ. Կ. Կ. Շատ շնորհակալ կըլինենք, եթէ մինչեւ դեկտեմբերի կէսը ստացած լինինք։

Կ. ՊՕԼԻՍ. Հ. Շ. Ձեզ նամակ ենք գրել։ Շուտափոյթ պատասխանին ենք սպասում։

ԴԶՒԱՐ. Մ. Կրտսագրենք, կարդացինք։ Միւսների չբնդունելը միայն մեզանից չէ կախւած—շարունակեցէք։

ԹՆԼԱՒ. Ղ. Թ. Ի՞նչու էք մեզ մոռացել։

ԱՍՏՐԱԽԱՆ. Ն. Դ. Տարազը շաբաթաթերթի դարձնելով, մենք անընդհատ հաւատում ենք, որ մօտ ապագայում, օշ թէ 5000-ի այլ աւելի հազարների կրնանի մեր բաժանորդների թիւը։

ԲԱԳՈՒ. Շատերին. Ընդունեցէք մեր յարգանքը եւ շնորհակալութիւնը։ Հայ ժողովրդի եւ երիտասարդութեան այդ ջերմ համակրութիւնն է, որ մեզ թեւ ու թիկունք է տալիս այսպիսի համարձակ քայլեր անել եւ օր օրի վրայ ընդլայնել մեր գործունէութիւնը։

ԳԱՆՁԱԿ. Ա. Թ. Դուք զարմանում էք։ որ այս տարի մենք ապատիկ չունինք։ Ի՞նչից էք այդ եզրակացնում։ Մի՞թէ, որ այս տարի մենք չբյիշեցրինք մեր հարգելի բաժանորդներին, այդ կարող է հիմք լինել ձեր եզրակացութեան։ Հաւատացէք, որ այս ութ տարւայ ընթացքում, չընայած մեր թերթի 3 ր. աննշան բաժանորդավճարին, 7000 բուբլուց աւելի ապատիկ ունինք։ Թող ամաչեն նրանք, որոնք ձրի ստանում են թերթերը եւ չեն խղճահարւում, եւ ցաւալին այն է, որ այդպիսիներն են ամենից մեծ-մեծ խօսողները։

ԱԼԲՔՍԱՆԴՐՈՊՈԼ. Անդրկով. Դրամատուն, Տ. Թումանեան. Բարեհաճեցէք մեր թերթերի համար ձեզ մօտ ժողոված դրամները մեզ հասցնել:

ԴՊՂԱՐ. Գ. Ք. Մ. Ուրախութեամբ կը տպագրենք. ընծողուկը այս № ում տպագրեցինք. միւսը թէեւ շատ յարմար, բայց անկարելի է տալը: Շարունակեցէք խնդրում ենք, բայց միշտ աշխատելով կարճ եւ սնփոփ գրւածներ ուղարկել:

ՇԱՏԵՐԻՆ. Էլի մէկ անգամ հրաւիրում ենք մեր թերթերի բաժանորդագրենը դեռ չընծաւոր ընկերին գնել այժմ, տարեայ վերջին, ուղարկեն իրանց պարտքը. Հակառակ դէպքում դեկտեմբերի, №-ում կը տպագրենք իրանց անուանացուցակը մանրամասնաբար եթէ իրանց պարտքը վճարելուց հրաժարւողներ:

ԿԵՐՃ Կ. Յ. Առանց կարդալու ոչինչ չենք կարող ասել:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոր հրատարակութիւններ

Շնորհակալութեամբ ստացել ենք պ. Յ. Ս. Կոռնիկեանի նոր արարածով 1) Մեր ճանապարները կամ Թիֆ. կեանքից վերառած: 2) Տիկ. Սարգարիտից, իր թարգմ. Ցալազրութեան առաջին հնարողը, Յ. Գուտեմբերգ: 3) Թիֆ. Հրատ. Ընկեր. հրատար. Կ. Մել.-Շահնազարեանի Ուղեցոյց գործնական շերամապահութեան: 4) Տիգրան Նազարեթեանից իր ժողովրդական հէքիաթների վեցերորդ գիրքը: 5) Դրքան. Գրիգորեանից իր ժողովածուի նոր հրատարակած Զարկեարի քնարը բանաստեղծութիւններ: 6) Ս. Տեր-Սարգսեանից Հայկական գեղագրութեան օրինակներ: 7) Իշխան Թումանեանից Словарь кавк. дѣятелей. 8) Տիկ. Սարգարիտից ծաղկահատութեան առաջին հնարողը, դոկտոր Ֆէնէր: 9. Լեոնցից իր բանաստեղծութիւններ: 10. Աղ. Քալանթարից Состояніе скотоводства на Кавказѣ. 11. Նիկ. Տեր-Ղեւոնդեանցի հրատարակ. Началь. книга русс. яз. для арм. школъ, կազմեց Գ. Թումանեանց: 12. Շիրվանզադեից Ջուր յոյսեր վերջ: 13. Տիկին Սանա Մելիք-Յակոբեանից ԲԱՓԻՐ խեմբ եւ Ցալալէդդին մի գոքոռմ 14. Յ. Գօգիբաշիրոց իր Սաղմոսներ ՀԱՅԵՐԵՆ 15. Փ. Վարդանեանից իր թարգ. Սմայլսի ինքնօգնութիւն:

ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐ

1891 Թ.

Օրերս լոյս կը տեսնեն.

1. Ծոցի պատկերազարդ լիակատար օրացոյց գինը 15 կ.
2. Սեղանի մեծադիր 30 կ.
3. Կանանց համար յատկապէս „ „ 40 կ.
4. Պատի հատուածական լիակատար „ „ 50 կ,
5. Դրպանի փոքրադիր, համառօտ „ „ 5 կ.

Բոլոր 5 հրատարակութիւններին միասին բաժանորդագրողը ճանապարհածախս չը պէտք է վճարի:

„Աղբիւրի“ եւ „Տարազի„ բաժանորդները վճարում են ճանապարհածախսով 1—20 կ.

Դիմել „Աղբիւրի“ վաճառանոցին.

Тифлисъ. „Агбюръ“

Խմբ.-Հրատ, Տ. Նազարեան:

Дозволено цензурою, Тифлисъ, 1890 г. 10-го ноября.

Типографія „Ароръ“ Т. Я. Назарьянъ, угол. Головин. пр. и Барят. ул

ԱՌԱՋԻԿԱՅ 1891 ԹՎԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԿԸ հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն սլաստրատայով։ Մենք կը ստանանք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

„ՄՇԱԿԻ“ տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել „ՄՇԱԿԻՆ“ կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձնակայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը)։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից „ՄՇԱԿԻՆ„ գրվելու համար պէտք է դիմել հեռաւոր հասցէով՝. ТИФЛИСЪ, Редакція газеты „МШАКЪ“, իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւնները ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

III ՏԱՐԻ „ՄՈՒՐՃ“ III ՏԱՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

1891

ԹՎԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԻԱԾ Է

„ՄՈՒՐՃ“ ամսագիրը կը հրատարակվի 1891 թուականին նոյն ծրագրով որպէս և նախկին տարիներում։

„ՄՈՒՐՃ“-ը կը հրատարակվի ամեն ամիս 8—11 թերթ մեծութեամբ։

„ՄՈՒՐՃ“-ի նոր բաժանորդները ձրի կը ստանան տիկին Մ. Մարիսեանի «Հեղինէ» վէպի 1890 թուականի «Մուրճ»-ում տպված բոլոր գլուխները, այն է՝ առաջին հատորը. բաղկացած աւելի քան 200 երեսից։

„ՄՈՒՐՃ“-ի նոր բաժանորդները արտօնութիւն կունենան ստանալու „Մուրճ“ ամսագրի 1889 և 1890 թուականների բոլոր 24 համարները տասնուչորս ռուբլիով, մինչդեռ ոչ բաժանորդները կարող են նոյնը ձեռք բերել 24 ռուբլիով։

„ՄՈՒՐՃ“-ի բաժանորդագինն է տարեկան 10 ռուբլի։

Թոյլ է տրվում վճարել մաս-մաս, ստորագրելիս առնվազն 5 ռուբլի և առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով։

Ուսուցիչները և ուսանողները վճարում են տարեկան 8 ռուբլի, ստորագրելիս առնվազը 3 ռուբլի վճարելու պայմանով։

Խմբագրութեան դիմում են՝

Тифлисъ. Редакція журнала „Мурчъ“ և կամ

Tiflis (Caucase), Rédaction de la Revue Mourtch.

ԲԱՑԻԱԾ Է 1891 ԹՎԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏԱՐԱԶ

Ամսեան — յանձնուած

Գեղարուեստական—գրական-երգիծաբանական

Պատկերազարդ շաբաթաթերթի

Պատկերազարդ „ՏԱՐԱԶ“ շաբաթաթերթը հասցրած կըլինի նկարների կողմից մայրաքաղաքներում՝ հրատարակուող շաբաթաթերթի ճոխութեանը: Բովանդակութեան կողմից պատկերազարդ ՏԱՐԱԶ շաբաթաթերթը նոյնպէս ճոխ կըլինի եւ բազմակողմանի: Գլխաւոր մասը, որ պատկերազարդ ՏԱՐԱԶ շաբաթաթերթում՝ նկարների հաւասար առաջին տեղը կըբռնէ; կըտպագրուին մի շարք պատմական եւ ժամանակակից վէպեր, հանդուցեալ ՐԱՖՖԻԻ, նրա թողած թանգագին ձեռագիրներից, պ.պ. Աղայեանի, Պռոշեանի, Լէօի, Վ. Փափազեանի եւ ուրիշների:

Պատկերազարդ ՏԱՐԱԶ շաբաթաթերթը լոյս կըտեսնի ամեն կիրակի օր ա յժմեան ՏԱՐԱԶ ամսաթերթի դիրքով եւ բաքանչիւր համարը երկու թերթից:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԱՐԱԶ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՆՊԱՏԱԿԸ

Հայ անդաստանում՝ ցանել գեղեցկի եւ բարոյ սերմեր ու արմատախիլ անել տգեղ եւ չար որոմն:

ԴԵՂԱՐՒԵՍՏՆ լինի նա արտայայտուած բանաստեղծի վառ երեւակայութեամբ, հրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ տրոփացնող վիպագրի գրչով՝ Տարազդամառաջին տեղը պիտի բռնէ: Քննադատութիւն մեր առօրեայ կեանքի՝ լինի նա արտայայտուած վէպով, պատմածով, Փէլիետօնով, թէ կատակով Տարազի գրական մասը պիտի կազմէ:

Կանանց խնդիրը, լուսաւորեալ եւ մեր աշխարհի կնոջ վիճակը, դրութիւնը արդի ընդհանուր գրականութեան մէջ տիրապետող այդ խնդրի վերաբերեալ վիճաբանութիւնների հետեւանքը պարբերաբար կարծանագրուին Տարազում:

Տարազի մի երկրորդական մասը կըկազմեն պատկերներ, նկարներ, տեսարաններ, թէ արդի եւ թէ անցած գնացած, զգիաւորապէս մեր կեանքի: Հայ կինը ամեն շաբաթ Տարազում կըգտնէ եւրոպական նորագոյն կարուածների, ձեռագործի վերաբերեալ նկարներ բացատրութիւններով:

ՏԱՐԱԶԻ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարուեստ եւ գիտութիւն. Պատմական եւ ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրուածներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն եւ կենսագրութիւն: Կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն եւ տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ թատրոն ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդուածներ եւ այլն: Փէլիետօն, ծաղր, առած, կատակ: Շախմատի եւ այլ խաղեր, ռեբուս, հարցեր, խորհուրդներ: Այլեւայլք, պատասխաններ, յայտարարութիւններ:

ՏԱՐԱԶ պատկերազարդ շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը 6 ռուբլի է, արտասահմանի համար 7 ռուբլի (20 ֆր.) իսկ «Աղբիւրին» եւ «Տարազին» միանուագ բաժանորդ գրուողը մինչեւ առաջիկայ դեկտեմբերի 1-ը վճարում՝ է 9 ր. 28 կ. փոխարէն 8 ր. 28 կ.

Հասցէն՝ Тифлисъ. редакція иллюстр. журн. „Тараз“ կամ՝ Tiflis, (Caucase) Rédaction du journal illustré TARAZ.

ԲԱՑԻԱԾ Է ԱՂԲԻՒՐԻ 1891 ԹՒԱԿ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Կընդարտարակի նոյն ուղղութեամբ, ծրագրով եւ նոյն աշխատակիցների մասնակցութեամբ:

Առաջին պրէմիան է մի գեղեցիկ օրէօգրաֆիա

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

խոզ արածացնելիս

Աղբիւրի Բ. պրէմիան՝ մեր տարեգրատ նվարիչ պ. Գէորգ Բաշինջարեանի ԱՂԱԶԱՆ ՀՈՎԻՏՍԸ մեծադիր եւ շքեղ ծիծաղելը վիճակ կրգրի բա խոնարհների մէջ տեղեկեր կամ տեսնելիքեր ամենի:



Աղբիւրի Գ. պրէմիան զալ 1892 թ. համար դրուելիք №-ի հետ կարդարդի մի տարեգրատ-տարեցոյցներ եւ մի գեղեցիկ փիրուզ ոսկեցոյց հրգի դրամներ, տարբեր ոգի ազգայնակարգ-ին հանելիներ, ոգեղեցիկ, որոնցից առաջին գլուխները կարդալ մրցանակներ:

Բաժանորդ գրողը ստանում է Ա. պրէմիան Թիֆլիսում իսկոյն, իսկ միւս քաղաքները ուղարկւում են հերթով, վճարը մեզ հասած օրից ամենաուշը մինչեւ մի ամիս:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ պրէմիայից ստացւած են արդէն 3000 օր.

Աղբիւրի տարեկան բաժանորդագինը 3 ր. է եւ պրէմիայի ճանապարհածախս պէտք է ուղարկել 28 կ. փոստի մարկա:

Արտասահմանի համար պրէմիաներով 4 ռուբլի:

ապառիկ ոչ ոքից չի ընդունւում

Հասցէն՝ Тифлисъ, редакція „АГБЮРЪ“

Իսկ արտասահմանից՝ Tiflis, (Caucase) rédaction de la revue AGBUR·

Խմբ.-հրատ. Տիգրան Նազարեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 12

Գարեգին եպիսկոպոս Սրբանձտեան Աղբիւրի այբբմ.
*** Բանաստեղծութիւն — Փ. Թադէոսեանց
Մուրացկան (Ցուրգենեւից) — Լէօ
Կատուն (ոտանաւոր) — Թափառական
Հէքիաթների անմահ ստեղծողը, — Ղ. Աղայեանց
Սեւանայ լիճը նկար Գ. Բաշինջաղեան
Ուսանողի նամակը — Պ. Հ. Ադամեան
Դրախտ — Վ. Փափազեան
—Բարի լոյս—պատկեր
Գետակ, բանաստեղծութիւն — Աղ. Ժատուրեան
Հայոց լեզու, — Ղ. Աղայեանց
Զարմանալիք, հանելուկ, ոեբուս, նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը:
Մի բոթաբեր հեռագիր—Մկրտիչ Իմինի մահ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

„Աղբիւրի“ Գ. ընծան: Ադամեանի նամակը: Երաժշտական երեկոյ Ադամեանի օգտին: Աղբիւրի Բ. ընծան: Թիֆլիսի Հայերէն գրքերի Հրատարակչական ընկերութիւնը, Ղ. Աղայեանցի բանաստեղծութիւնները, Նոր ստացած գրքեր,
Աղբիւրի պատասխաններ, Յայտարարութիւններ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Թէ „Աղբիւրի“ և թէ «Տարազ» շաբաթաթերթի առաջիկայ 1891 թուականի առաջին №№-ը լոյս կըտեսնեն ճիշտ յունուարի մէկին և կուղարկուին, ինչպէս մեր սովորութիւնն է, միմիայն նրանց, որոնք նորոգած կըլինին իրանց բաժանորդագրութիւնը:

—

Սպառիկ բաժանորդագրութիւն, կամ մաս-մաս վճարելու պայմանով բաժանորդներ չեն ընդունուում, և խնդրում ենք մեր յարգելի գործակալներին ոչ մի բացառութիւն չտալ:

—

Խմբագրութիւնս պատուիրել է ներկայ 1890 թ. «Աղբիւրի և «Տարազի համար *ոսկեզօծ դրոշմատիպ շքեղ կազմեր*, այնպէս որ ամեն մի հասարակ կազմարար և նոյն իսկ օրիորդներ և աշակերտներ կարող են հեշտութեամբ կազմել: «Աղբիւրի» այդպիսի կազմը 60 կ. արժէ, իսկ «Տարազինը» 1 ր.: Նրանք, որոնք կըկամենան, հէնց կազմած բոլորովին պատրաստ ստանալ, թող բարեհաճեն իրանց ամբողջ տարուայ №№-ը, թէ Աղբիւրի և թէ Տարազի ուղարկել մեզ և մենք բոլորովին կազմած, պատրաստ կուղարկենք ըստ պատկանելոյն: Այս դէպքում միայն պէտք է աւելացնել 40 կ. ճան.—ծախք:

—

Խմբագրութեանս գրասենեակում «Աղբիւրի» *Անուսակ որդիւ* պրէմիայի համար պատրաստի կան 1 ր. ոսկեծ շրջանակներ: